

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Դրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 14

Գ. ՇՐՋԱՆ

6 ԱՊՐԻԼ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթերթի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բառուս ղը. եւ գաւառներուն համար Յիսուս ղը., կանխիկ վճարելի: Արտատպութեան 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընկումուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ըզի ամէն շաբաթ սոսու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է ի կոյն խմացնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ աշխատասկիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزته سي اداره سنده

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE



UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳԱՍԻ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

Բացի սովորական ներքին հիւանդու-
թիւններէ՝ կը դարձանէ մասնաւորաբար ,
նոր մեթոտներով եւ խնամով. ստանիսի,
աղեսոց , միզակական ճարտարներու հիւան-
դութիւններ, ջղային սկաւորութիւններ ,
զաղիական ախտեր (սիֆիլիս եւլն) եւ
մտրքի հիւանդութիւնները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ
վերջը :

ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐ ՃԵԼԱԼ , նախկին հիւ-
դիոն եւ հեղեոն Բարիզի հիւանդանոցներուն ,
եւ չքաղարամով պատուուած Assistance Pub-
liqueի կողմէ : 14 տարի Բարիզ անցունելէ
եաքը , որուն 6 տարին իբրեւ բժիշկ , մայ-
րաքաղաքս հաստատուած է : ՏՈՔԹ. Գ. ՃԵ-
ԼԱԼ կը դարձանէ , բացի ընդհանուր հիւան-
դութիւններէ , մասնաւորապէս ջղային եւ
մտրքային հիւանդութիւններ : Ամէն օր , չո-
րեքշաբթիէ զատ , կէս օրէ վերջ հիւանդ
կ'ընդունի իր տունը՝ Բերա , Սաղըզ Աղաձ ,
Թ. 38 :

16—30

ԸՆՏԻՐ , ՀՈՏԱԻԷՏ , ԽՆԱՅՈՂԱԿԱՆ

ԹԵՅ

ԹԵՅ

ԹԵՅ

ԹԵՅ

ԹԵՅ

ԹԵՅ



Կով թող գիտնէ ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատան , ուր ամենամեծ խնամով ,
զգուշաւորութեամբ կը քործադրուին ամէն կարգի յանձնարարութիւնք՝ մեծաքանակ եւ փոք-
րաքանակ , Դիւրութեան համար՝ թէյերուն փոխարէնը կարելի է վճարել նաեւ երբ ապ-
րանքները բնօրին ու ֆոնօշիմէնքօն ներկայացուի գնողին : Կեղծ թէյ չգնելու համար
հաճեցէք ուշադրութիւն ընել վերի մարքային եւ ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ անուանց ,
Կեդրոնատեղին՝ Կ. Պոլիս , Պահէ Դարու , Ճէլալ Պէյ խանի կից , թիւ 10 , Կ. Եաւրուեան
Կ. Իսազուլեան մեծ վաճառատունը :

ԲՐՈՑ. ՀԷՌՄԱՆ ԳԼԷՆՔԷԻ

ԿԻՆՆ ԻՔՐԵԻ ՕՐԻՈՐԳ

Թարգմանութիւն Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆԻ 430 էջ

Բնախօս-բժիշկը չափահաս օրիորդաց ֆիզիքական եւ բարոյական զարգացումը ինք-
նակրթութեամբ կարելի ընելու համար պատրաստած է այս գիրքը , որ իր հայերէնի
թարգմանութեամբը կոչուած է զգալի պակաս մը լեցնել մեր գրական հրապարակին
բնախօս-առողջապահական աշխատանքութեանց ցանցաւ շարքին մէջ :

ՅԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ Է ԱՅՍ ԴԻՐՔԸ ԱՄԷՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ

Կեդրոնատեղին է՝

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը , Ֆինճանճըշար , Կ. Պոլիս

Կը գտնուի Կ. Պոլսոյ եւ գաւառաց լոյրը գրավաճառներուն քով :

Թիքակազմ 10 , Լաքակազմ 15 , Ոսկեզօծ 20 դահեկան :

Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ

ՇՈՓԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



ՎճԱՐՆԵՐ

Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենաւարդ հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուսայրի պարզ օճառներ:

Տեսակի պզնութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանքային դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիներու պերագանց աժանութիւնը: Փափաքողներուն՝ քաթալիք ձրի կը զրկուի:

Մեծաքանակ գնում ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՈՍՏԻ ՊԱԲԻ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻԲ վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ խտտորեւ ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով:

ԲԱՐԻՋ. — Պ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաքուեռն:

ՊՈՄՊԱՑ. — Պ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔՍԱՆՐԻԱ. — Պ. Մ. Կալֆանան

ԴԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզանբալ

ՌՈՒՍՃՈՒԿ. — Պ. Գ. Կ. Ինճիճեան որդիք

ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտիքի

ԻՋՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻԻՆԵԻԱ. — Պ. Հայրիկի Վառնիկ

ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիեռ Ֆերնանտէզ

ԻՆՍԿԻԿ. — Պ. Մ. Քափուան

ՊԷՑՐՈՒԹ. — Պ. Ֆրանքիլ Շիֆֆեր

ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Եղբարք

ՏՐԱՊԵՋՈՆ. — Պ. Աբիս Կ. Ինճիճեան

ՍԵԲԱՍՏԻԱ. — Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՍԹՈ. — Պ. Յակոբ Բոօվատալ



ՌՈՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄԲ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ

34,775,642 Ժրանք

երաշխաւորութեան գումար

121,765,333

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000

Կեդրոնացեղի, Լալաթիոյ Բաքափին վրայ, Մաքսաւան հին տեղը

Ընդհ. Բնէիչ

Ընդհ. Գործախալ

Ա. ՀԻԻՐՄԻՆՋ

ԹԷՈՏՈՐ ՌԷԲԲԷՆ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 6 ԱՊՐԻԼ 1902 —

ԹԻԻ 14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատահիներուն համար (խմբագրական) **Տ. Ա.** — Աղջկան սիրը (Բանաստեղծութիւն) **Վ. ՄԱԼԷՉ.**
ՅԱՆ. — «Թղթաբաց» (Դատաւի կեանքէն) **Գ.Ն.Վ.Ս.** — Ռօպէրդ Բօլէն (Հրատարակութեան մը
 առթիւ) **ՏՈՒՐՈՒ. Յ. Տ.** **ՄՏԵՓՈՒՆՅԱՆ.** — Խղունցի ոգի (Ֆրանսացի վիպասանի մը անձնատպանութեան
 շուրջը) **ԱԴԻԼԻԱ.** — Ծողկազարդ (Ժողովրդային բանաստեղծութիւն) **Ո. Մ.** — Գեղման զրականու-
 րիւն. ՆերիւնԱ (Վեպ) **ԲԱՌՈՒ. ՀԱՅՅԱՆ.** — Յուշատետք:

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Ծաղիկի մէջ Մ. Շամառնեան շատ կեն-
 սական հարց մը կը յուզէ, զպրոցական աղօց
 առողջապահութեան վրայ մօտէն հսկելու եւ
 զանոնք պատանեկան ախտերէ հեռու պահե-
 լու հարցը, Առաջին անգամը չէ որ կը գրուի
 այս նիւթին վրայ, — եւ արդէն, կարելի՞ է
 դանկ մեր լրագրութիւնը զսաղեցնող նիւթ
 մը որ անկոխ դեմքին մը, կոյս հող մը եղած
 ըլլայ, — լայց գէթ իր եզրակացութիւնը նոր
 է բոլորովին, — Պարտաւորաբար, վարժարաննե-
 րուն համար փոխանակ կրթական տեսուչ մը
 կարգելու՝ առողջապահական տեսուչ մը կար-
 ղել, բժիշկ մը որ ամէն մէկ զպրոցը այցե-
 լուն՝ աշակերտներուն ուսումնական յառաջ-
 դիմութեան աստիճանը քննելու տեղ, անոնց
 Ֆիզիքական վիճակը աչքէ անցունէ, ընդհա-
 նուր կերպով, եւ պզտիկ յորդորներ կարգա-
 ւիտաւորակ պատանիները եւ կեցնելու հա-
 մար այն հիւծիչ մօլաթներն զոր մանկերու
 թշնամիքն անուշով սրակած է Տօքթ. Յ. Տ.
 Ստեփանեան իր համանունը գրքոյկին մէջ:

Իրաւ է որ մեր զպրոցներէն շատերը
 իրենց այցելու բժիշկը ունին հիմայ, լայց
 աստիճանական է որ անոնք աղօց մաղերուն
 կտրուածքին, եղունգներուն կեղտոտու-
 թեանը, նստուածքի ձեւին եւ դասարաննե-

րու օդին մաքրութեան սահմաններէն անդին
 անցած ըլլան: Ծաղիկի խմբագրատեղին
 մատնաձիւրք ըրած վէրքը հիմնական ու խոհա-
 կան դարմանի մը կը կարօտի որուն վրայ
 կ'արժէ որ ծնողքները, հոգաբարձութիւննե-
 րը եւ հրապարակագիրները հաւասարադէօ
 ուշադրութեան դարձնեն, եւ լրջօրէն: Եթէ
 մեր մամուլին մէջ այս տեսակ առողջ մտա-
 ծումներ ու փրկարար առաջարկներ անհետե-
 ւանք կը մնան ընդհանրապէս, պատճառը
 այն է որ ամէն մէկս՝ զգալով հանգերձ փոր-
 զուած դադափարին օգտակարութիւնը՝ կը
 վարանինք քանի մը տող ալ մեր կողմէն
 նստիլ անոր եւ ուժ տալ, որովհետեւ ուրիշ
 թերթի մը կամ պաշտօնակցի մը լուս մէկ
 թելադրութիւնը կրկնելու չեղտելը... ո՞րքա՞ն
 կը նկատենք: Ու այս դձուձ տեսակէտը կը
 հարկադրէ մեզի՝ միաքերնիս տանջել նորու-
 թիւն մը գտնելու եւ հրապարակ նետելու
 համար, նոյնքան ուշադրութիւն մըն ալ մեր
 կողմը դրաւելու անախատութեամբ:

Ի՞նչ աղուոր օրինակ մը տուած պիտի
 ըլլայինք՝ հանրային օգուտին նախանձախն-
 դիր լրագրութեան, եթէ զէթ ներկայ օգու-
 լագոյն մէջ, — մեր մատաղ զպրոցական-
 ներուն առողջութեան կենսական հարցին

առջեւ, — միտհաղոյն զբաղէինք անով, փոյթ չէ թէ կարծիքները տարբերէին՝ պատանեկան մոլութեան պզտոր հոտանքը կասեցնելու համար գործադրուելիք միջոցներու մասին :

Տգէտ նախապաշարումի մը կոյր հետեւողութեամբ է որ կը վախճանք այդ մոլութեան անունը, «գիջութիւն» բառը, բերաննիս առնելէ եւ մանաւանդ գրելէ : Թէեւ, չենք քաջուիր մեր զաւկըներուն ձեռքը տալէ ամէնէն բայց զիրքերը, կամ անոնց առջեւ խօսելէ ամէնէն գայթակղական պատմութիւններուն վրայ : Մեզի այնպէս հաւատացուցեր են որ այդ ախտին վրայ գրելով ու խօսելով աղոց միաքը արթնցուցած կըլլանք : Այս կասկածը կրնար մինչեւ մէկ տասիճան արգարացի բլլալ՝ Գերեզմանի Երիսասարդացի ոճով գիրքի մը համար, մինչդեռ Մանջերու քջնախին բոլորովին ներհակ օգտեցութիւն մը կընէ պատանի ընթերցողին վրայ, ապակահարար բան մը չի սորվեցնելէ զատ՝ զիսցած ապակահուլիւնէն ալ հրաժարեցնել տալու ձգտելով : Այսպէս նաեւ Ծաղիկի խմբագրականը՝ լրագրական յոգեւածներու շարքին մէջ, Ապահով եւ որ հարկւարուոր տղաքներ կարողացին այդ յոգեւածը, չիկնեցան, թեթեւ սարսուռ մը ունեցան, ու պահ մը մտած կուտ մնացին : Մասին մէջ այս քանի մը տողերն ալ կարդալով նորէն պիտի մտածեն : Պէտք է՝ զոտ քաղել անոնց այս զարթնումէն ու՝ այս բարի արամագրութեան, մտերմական ոճով մը, անոյ խօսքերով անոնց մտքին մէջ ապաւորելու համար սա ախուր ճշմարտութիւնը թէ՛ դեռ կեանքը չի վայելած՝ մահուան ճամբան բռնած են : Ու ինչ որ զիրքով ու լրագրով չի զրուցուիր, զպրօցին բժիշկը պէտք է բժէ անոնց — բլլայ առողջապահական քննիչ կամ այցելու բժիշկ :

Դիտեցէ՛ք մեր զպրօցականները, եւ անոնց մեծ մասը պիտի աւանդէ վախ եւ դուռնաւ : Աչքերնուն մէջ տարտամ բան մը կայ ու գէւքերնուն վրայ մեղամաղձութիւն մը դոր միամիտ ծնողքները բանաստեղծական արամագրութիւն կը համարին, բայց բժիշկ մը, փորձագետ մարդ մը պիտի կռահէր թէ պատանեկան ախտին առաջ բերած ընդար-

մացումը ու մեղկութիւնն է որ տակաւ տակաւ հիւանդութեան մը կը յանդի : Խնդիր պզտիկ զոհեր որոնք այսօր ուժաստատութիւն մը կը զգան, վաղը սակորներու թուլութիւն մը, եւ օր մըն ալ զլուխնին բարձին կը դնեն :

Բանասէր ու գրագէտ բժիշկներէ զատ, ունինք նաեւ շատ մը բժիշկներ որոնք զոտ իրենց արուեստին վերաբերող նիւթերով կը զբաղին լրագրութեան մէջ, կանոնադրապէս գրելով զիտական զիտերու եւ ուսումնասիրութիւններու վրայ : Այդ գրչի տէր՝ բժիշկներուն համար ազնիւ գործ մը պիտի բլլայ ինչ մըն ալ զբաղիլ այս կենսական հարցով : Լրագիրը տաղձը կը հայթայթէ — ինքի մէջտեղ գնելով — եւ մասնագէտներն են որ պիտի գործեն զայն :

Մեր զպրօցական պատանիները որքան միտքով՝ նոյնքան ալ մարմնով առողջ պահելու պայմաններու մասին ժողովրդական ոճով գրուած քններ չա՛տ աւելի կ'արժեն մեր անտաշ միտքերուն համար քան թէ միբրոպա զննական տեսութիւններ ու կարգ մը բժշկական խրթնութիւններ :

Զի բաւար միայն ախտը մատնանիչ ընել, պէտք է զայն չեզոքացնող ու կասեցնող բաւերար միջոցներ պարզել, հրապարիչ ձեռք մը տակ, անդգալի ներարկումով մը աղոց մտքին մէջ : Մարմնամարդը, լողանքը, դաշտային պարօյր զիւրին ու, առողջապահիկ զրօսանքներն են որոնց վրայ պէտք եղածին պէս ուշադրութիւն հրաւիրած չենք : «Բանաստեղծական թէ՛ սրահական» զրութեան վէճը, նորապէս բառին ծագման հետախուզութիւնը, բաւերու հոլովումի աննշան տարբերութիւններ, ու ասոնց պէս շատ մը աւելի կամ նուազ կարեւոր խնդիրներ աւելի զբաղեցուցած են մեզի քան թէ պատանեկան ահաւոր ախտին ծաւալման առաջը անելու էապէս կենսական հարցը որ սերունդներու փճացման հարց մըն է :

Տ. Ս.

ԳԱԽԱՆԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գաւառային գրականութեան հարազատ ու գեղեցիկ նմուշ մը կը հրատարակենք այսօր — «ԲՈՒՅՈՒՆ»-ը — գոր գրած է ԳԵՂԱՍՄ (Արեւելի վաղաճանք)

աշխատակիցը որ կը ստորագրէ նաեւ Ռեկուսիտը)։ Հիւանդ տղու մը սկսածութիւնն է տսիկայ, զիւղական կեանքի պարզ պատկեր մը, որուն նկարագրութիւնները ու բացատրութիւնները կը պահեն իրենց բնատոնմիկ ոճը, առանց ընտել տուածութեամբ բառերով ու բացատրութիւններով խորքացած ըլլալու։

«ԹՂԹԱԲԱՅ»

— 000000 —

(Գ Ա Ի Ա Ռ Ի Կ Ս Ա Ն Բ Է Ն)

Ամբասն գիշեր մը, պարի լուսինը՝ համակ արծաթափայլ՝ կը փողփողար Պինկէօլի սպիտակ-խոզան սարերէն, մագական շողեր ցանցնելով դաշտ ու դաւաճաններու, սար ու սարաւանդներու վրայ։ Ամէն կողմ գիշերային հանդարտութիւն կը տիրէր եւ անուշ հով մը կը սուրար։ Բ. Գեղին մէջ՝ բոլոր շինականներ իրենց խրճիթներում հանդարտ քուն մը կը քաշէին, միայն շինական փոքր տնակ մը խռովայոյզ էր։ Հողէ ճրագին մէջ ձկնի պատրոյին նուագկոտ լոյսը կը պլպլար եւ շինական տնակ մը՝ թռիւրին շուրթը կծկած կը մնար՝ իր դէմն ունենալով պատաստուն անկողնոյ կազմած մը, որոյ մէջ կը դնուէր ու կը դարձնէր հիւանդ պատանի մը։ Իր ծնողքին հոգեհատորը, մէկ ու ճար որդին՝ կանանչ արեւով Աստուրը, որ տուրտաւորի աստիճան կը տանջուէր հիւանդութենէ մը, որուն ինչ ըլլաւ ոչ ինքը գիտէր ոչ ալ սրբաամուս մէրիկը։ Տասն օրէ ի վեր՝ հիւանդ էր էնիկ, ծանր ու սրտազոգ կերպով։ Պառկած օրէն՝ քրտինքի վատաւ կը չէր մտած էնոր բերանը։ Լալիով տաքութիւն մը կը մրկէր գինքը, կարծես կրակ դարձած էր բոլոր պատանը։ Դեղար չէին բերած, չկար գեղ ու գուր ալ։ Միաժամ ծնողքը՝ էս հողը թալեր էին Աստուրէն փեշը, յանձնելով գէնիկ՝ ամենամեծ բժիկի խնամոց։ Հէրը ուզեր էր դանել գեղար, նահապետական զարմաններ հասցնելու իր միամորին, բայց աղուն մէրը մերժած էր, սրտաւրուս եւ կուս հաւատքով յայտարարելով թէ՝ — «Մեռնիմ իր անահուն զօրութեան, իր կանանչ գաւազանին՝ քաղցրիկ Գրիտտոսի։ Երեք տարեկան անծին երկնջը մատաղ կանչերիմ, ինչ էնիմ աստուորի գուր ու դեղը։

Թէ ինքը կամենայ, հաւատամ, խոստովանիմ, հոգի կուտայ» եւայլն։ Ձէր ուզեր զեղիծել զաւակը, որպէս զի, ինչպէս յաճախ կը պատահէր, չծանրանայ, չդրգուի հիւանդութիւնը։ Այս տեսակ հանգամանքներու մէջ, ա՛լ աւելի կը շեշտուի շինական կիներու կամք ու հեղինակութիւնը, մանաւանդ մօր մը, որ գորովահար սրտով՝ գիշեր ու ցորեկ փռուած ու փարած կը մնայ հիւանդի անարին մօտ, կը վշտակիր, կը քաջալերէ, կը սիրէ, կ'արգահատի։ Ամէն անգամ, որ Ձքօն (աղուն հէրը) դեղարարի տնոնը կուտար, հիւանդն իր թախծալից աչերը կ'ուզէր դէպի մէրիկը՝ Ասլէն՝ որ անմիջապէս իր բաղասականը կը կրկնէր, ու ջերմեանդ զգացումներով, երկնային ողորմութիւն եւ օգնութիւն կը հայցէր, այն անայլայլ, խորարմատ հաւատքով, որ կը յուզէր իր ապուշ էրկան սիրտն ու հոգին։

* * *

Տասներորդ գիշերուան մէջ, որուն արդէն ակնարկեցինք՝ Աստուրի հիւանդութիւնը աւելի ծանր երևոյթ մը առաւ։ Հիւանդագին, այլ վտանգաւոր տագնապներէն մէկը կ'անցունէր։ Ինչ որ շատ հեղ մահացու հետեւանք կ'ուսենայ, Ասլէն՝ վշտաբեկ ու շարունակ աղուն բարձին վրայ ընկած՝ հայեացքը անոր աչքնուն՝ սիրտն անոր հոգին յառած՝ անհուն թախծով կ'աչքէր երկնային անօրէքէնութեան։ Արատուրքը կը խեղդէր զինք, բայց չէր խլանար ճնթկոց, հեկհեկոց հանել, իր հոգու հատորիկը չխռովելու, չյուզելու համար։ Կը մտածէր՝ իր լացը կրնար անաբեկել կամ դաւկին սրտի թելը կտրել։ Որովհետեւ կը կարծէր որ լացը՝ կրնար վատ նախադրացում մը ներշնչել Աստուրին՝ — թէ հոգեաւ հրեշտակը եկած է, արեւը քաղելու։ Նոյն պահուն՝ կէս գիշերն անցիր էր, ու սրբափայլ լուսնեակը բանձրցած էր ժանդատի կամարին վրայ։ Շողիկ մը անոր գեղնուկ լուսանէն կը սպրդէր Ձքօն տնակը, երթիք-բնակէն սողալով՝ կը պոլլուէր հիւանդի այտերուն ու մահանիչ գալուկ մը կը ցուցադրէր զարհուրած մօրկան աչքնուն։ Ասլէն է՛լ չգիտացաւ, կարծեց թէ աղուն հո-

գեքակումն է, որ սկսեց, ուստի փղծկեցաւ, ու քուքւալով՝ լացաւ: Զքօն՝ նըշկըվայ վեր թռաւ իր աղմկալից քնէն, որ ա՛յնքան ահաւոր եղած էր իր անբաղդեցիկ երազներով, ու նետուեցաւ անմիջապէս աղուն անկողինն վրայ: Ուշքը մոպուեր էր գլխէն, մաղ մնաց որ իր այլանդակ դոռում գոչումով լեզուաւոր ընէր զաւակը: Ասէն՝ ձեռքը հասուց անոր բերանին ու կարկամեցուց զայն:

— Ի սէրն Բրիտտոսի՝ ասաց Զքօյի սկանջէն՝ ձէն ու ձուն հանես, չիտովես զիմ մէկիկ ու գոհար օրդին: Մեզի մէկ ճար մնացեր է: — Անահուց Աստուածը ու քղարացը: Աստուերի մէկ ոտք էսդին, մէկ ոտքն անդին է: Վազէ՛ Կ. գեղը, տէրաէրին թուղթ մը բանալ առ: Աստուած զնեղն էլ զրեր է, զզնեղն էլ: Դու էլ զիտես, որ էա տէրաէրի թուղթը հրդարհաւ է (անմիջական բուժումն անող):

Էրիլը՝ արամ-տարամ ու լալսփման հարցուց՝ «առօղջ է արդիօք»:

— Ո՛ղջ է, ասաց Ասէն, հոգի մը էնիկ ունի, մէկն էլ մենք, բաց զԱստծու փեշը չթողինք: քղարացն էլ զրոց է, քու Աստծու սիրուն եղնի, մի՛ կենար: . . . Զքօն ալաղալաւ՝ տրիսները հաղաւ, բիրը տաւ, խաչակիքեց զինք, ու զԱստուած կանչելով՝ անէն զորս ընկաւ:

* * *

Օղը ջինջ ու պարզ էր. սար ու ձորը ժըպտուն շողերով զարդուկ կարծես կը ծիծղային մարդու երեսն ի վեր: Քամիի ապրշում չվշվոցը, ջրին կամկարասան կարկաջը, զիչերահաւքին մեկամաղձոտ կանչիւնը ուշիկ, ուշիկ կը սկսէին ազդել Զքօյի սրտին, մորմոքին ու հերդեցունց մամուռքներուն վրայ զէպի իրենք քաշելով հիւանդի սնարին շուրջը: Անոր վշտակոծ երեւակայութիւնը, որ այնուհետեւ՝ թփէ թուփ, ծաղկէ ծաղիկ սաւառնած, կը թռէր, կը սուրար նուիրական ծառուկներէն՝ խաչադրոշ լուստուններէն մինչեւ սրբակիր սէրկիի գազաթին սրբանոցը եւ անոր վրայէն խուփն ու խող չօրորացող ճէյրան լուսնեակը, որ վառ ի վառ ու սոճառ կը փեղկատար ու կը լուսաւորէր սարահարթները:

Զքօն երեք քնաօրդ ժամ քալած էր, կամ վաղած: Զէր դիտեր, կը քալէ՞ր թէ կը մարէր: Պահիկ մը հոգեով մորմնով կը յափշտակուէր իր մահասարսուռ անակը՝ զոր հիւանդ Աստուերի մաղեղէն քուքլերը՝ նախըզալու թէ՛ ի՞նչ եղաւ էնիկ, արդեօք կա՞յ կ'ապրի՞, կը չնչէ՞, պահիկ մ'էլ հոգեյոյ՝ սեղակներով (խնդրումք) կը վերաթռէր զէլ անհունութիւնը անհունն Աստուած, մրմնէլով ու մաղթելով — Աստուած իմ՝ քու ողորմութեան զարկահին զուրպան, դու հասնիս իմ մէկիկ ու անճարիկ Աստուր արեւուն, Ու փա՛ռք, որ՝ Աստուծոյ ամենատես, ամենագութ աչիւրէն չէր վրկալէ էա միամիտ ու հոգեմօլոր անցորդը, վաճի՛ մինչ Զքօն՝ աւելի տառապակիր քան Աստուրը՝ խելացնոր կը յառաջանար ձորեթ, սարահարթներէ, անդին զթու թեան ու բժիկութեան հրեշտակը ապաքինութեան խնձոր կը զրորէր հիւանդի արին մէջ, որ կազդուրող երազէ մը արկելով աչիւրը կը բանար, ձեռները կը տարածէր մօրկանը ու նուաղիտ ձայնով մը հիւսանդի կանակ կ'ուզէր: Իւր այս անհաւատալի բարեգիտութեան՝ արիւնքած Ասէն՝ ուրախութենէն ուշակօրոյ կը լար: . . .

«Փա՛ռք քեզ Աստուած, դոհմամ քու ողորմութենէն, քղարացը ի՞նչ շուտ եկաւ վրդառնուկիս, մեռնիմ տէրաէրի դաշակին, ու անկշտում կը համբուրէր Աստուրի ձեռք ու ոտքը, մատուցանելով ալին ջուրի մը խալթայ խնձոր, զոր երկու օր առաջ Զքօն իւրեր էր քաղքէն: Աստուր կ'ոչուլաւ, կ'ուտէր իր կամակը, ու կ'իսկեղ չուրով կը հարցընքտէր: Էլ օ՛վ կրնայ կշռել չափն անսահման ուրախութեան օրդեպաշա մօր — իմ արեւ ու աստուորս, կ'ըսէր, ինչ կամակ որ դուր կ'իդայ, ըսէ՛ ինձի, հոգիս էլ կը մալնեմ ու կը հասցնեմ: — Ուրախութեան արեւնքը աղբրի պէս կը չաօր Ասէի երեսն ի վար՝ դոհութեան անհամար մաղթանաց մրմունջներու հետ: . . .

* * *

Իսկ թղթաւացի մեր ճամբորդը՝ 5 քառորդ ժամէ վերջ կը հասնէր Կ. գեղին կոշտ ուրծուն գարին վրայ հանգչող վաղիմ մա-

տուռին պարսպէն կախուած լուսնկային հովի (չուք) ներքեւը : Քրտինքի ու յուզմէնքի մէջ կը լողար : Առանց բնաւ հեւք ու հանգիստ առնելու՝ դեռանամա՞ծ վաղեց անոր խաչանիչ դուռը, զոր առք համբոյններով ծածկեց : Զոգած մատրան սեմին վրայ, գլուխը բացած, ու ձեռքերը տարածուն, կը պաղատէր, կը թախանձէր մինաւորիկ այդ սուրբին, դառ մը մատաղ կանչելով : Նա թամամեց աղօթքն ու ուխտը, խաչանիչի վերջակէսն ալ գնելով՝ ուղղուեցաւ գիւղը :

Տէրտէր ծածօթ էր իրեն, նոյնպէս տունը, ուր հասաւ, երբ կէս գիշերն անցուկ էր արդէն : Տէրտէրը սովոր էր, ամէն հեղձնդունելու այրպիտի ապագամ հիւրեր, զորս իր դուռը կը բերէր հրաշագործ քղքաքացի բազմահոգի համբաւը : Ժրագլուխ ու առնակին երէցիկներ, որու ականջը՝ գիշերներ միշտ կախ էր՝ շուտով սոք ելած, միատակ չափիկը հագած, ու ծծմբուտ ձողի կտորուանքով ճրագը վառած էր : Մինչ բակին մէջ՝ գէլխեղդ շունը՝ ինքզինք կ'ուտէր : Երեցիկներ նախ շունը կ'ապեց խառնամով, գրկափակը քաշելով դուռը բացաւ ու ներս ընդունեց մեր ճամբորդը, որ անծանօթ չէր իրեն : Զքօն՝ հեւքըսման՝ Տէրտէրի աջը առնելէ յետոյ, իսկի դադար չառած, պատմեց իր ծանարիկ տարաը ու դարման հայցեց :

Տէրտէրը նախ յօրանջեց, աչիները, մօրուքը չփչեց, ապա խալթօն չիբուխը վառելով, խորունկ մտածութիւններու մէջ ընկըղմեցաւ : Հանգ մը այսպէս մնաց ու բքնեց չիբուխը : Հիւրը վայրկեանէ վայրկեան մխրթաբական լուրի մը կը սոգատէր ծերուկ տէրտէրի օրհնուկ չրթներէն, որոնք սակայն անշարժ կը մնային : Զքօյի ներսը համբերանք չէր մընացած. — «Ծնած կով մը հորթով կը բերեմ քեզի, տէրտէր, ծառայեմ կարգիդ, ոտքդ ընկեր եմ, թուղթ մը բանաս, ճար մ'էնիս աղէկան» կ'մկմաց ցած ձայնով :

Տէրտէրը ցնցուեցաւ, գլուխը վեր առաւ, ժպտուն նշաններ ցոլացին երեսին, — Օրհնած, ասաց նա, պատգամախօսիկ հնչիւններով, Յիսուս-Քրիստոսի շնորհքով (խաչակընքելով երեսը), էնպէս թուղթ մը պըսբանամ ու պաժկանց թուղթ մը գրեմ, որ

Աստուրին աչքը բացուի ու ցաւն փարափ : «Վեցնաղարեակ»ն ուղեց, նաեւ թուղթ, զալամ ու տիվիթ : Հրաշահոտան ձեռագիրը թղթատեց, չրջեց, չրջմակեց, ու կետկիտուած բոլորագործի մը վրայ պչալէ յետոյ, մտաներու վրայ թուումն ըրաւ Աստուրի ու հետեւեալը կարդաց :

«Բնութիւնն բարի է : Յարժամ ի պուրճն «իջանէ, զինչ բարի բան խնդրես, կատարէ, «բժշկութիւն, սէր, իմաստութիւն տայ» եւն : Տեսար օրհնած, ինչ բարի գուշակ գտայ, ու դարձեալ ձեռք առնելով ժանգոտ թղթին վրայ գրեց եւ քաղքուի, եւ տապուի, եւ սիթառ, եւ փիլիսի, եւ կարմիրուի, Անտիա եւ Թաւի, աւրիւնաւոր քժշկեցե՛ք զճառայս Աստուծոյ Ասլէի ուրիշի Աստուրն, ամեն : — Թուղթը եռանկիւնի ծալեց, Զքօյին տուաւ, — տա՛ր ու Աստուրի բարձին վրայ կարել տուր, սեւ հաւ մըն ալ մորթէ դէմ աղօթքան ու միւսը տուր թող ուտէ : Զքօն սրտապընդուած, ոտքի ելաւ, տէրտէրի ձեռքը համբուրեց՝ ժամոց մը սահեցնելով, եւ անմիջապէս մեկնեցաւ :

Աղօթքանը մաղմղեր էր. նա տունը հասաւ ու անպատու մեղուութեամբ տեսաւ որ Աստուրը մօր սրտին սղմած կամկար, կամկար կը մէլէր, կաղցուրուած ու գրեթէ ապաքինուած : Զքօն սողուն ճակատը համբուրելով խխուր վազեց եւ անձին երկնջը մատուցեց : Հինգ օրէ վերջ Աստուրը ողջնցած ու սոքի ելած էր :

Այն օրէն մանուսնո՞ք՝ Տէրտէրի քղքաքացի ին հոռնարը աւելի շեշտուած էր :

ԳԵՂԱՄ

Պատրիարքական երկու կանգակներ հրատարակուեցան շարթուս մէջ, մէկը՝ Իզմիրի Ս. Լուսաւորչեան Հիւանդանոցի հաստատման հարկւրամեակին առթիւ Տ. Մելքիսեդեկ Սըրբաղանի ուղղուած, եւ միւսը՝ վերջերս Այնթապի մէջ երեւան ելած «Փիլիպոսեան» առուն նոր աղանդի մը մօլորանքներէն հայ բարեպաշտ ժողովուրդը զգուշացնելու համար՝ Այնթապի աղագայիներուն ուղղուած :

ՌՈՊԵՐԹ ԳՈԼԷՃ

— ❧ —

(ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ)

Անցած յունիս 25ին, Ռոպէրթ Գոլէճի ամսվերջի հանդէսին օրը, նոյն վարժարանին նախկին ընթացաւարտներէն ներկայացուցիչներ կը հաւաքուէին իրենց սիրական յարկին տակ՝ կազմակերպելու համար Ռոպէրթ Գոլէճի ընթացաւարտներու մարմինը։ Ու այսօր, քանի մը ամիս վերջը, այդ մարմինը հրապարակ կը հանէ իր առաջին հրատարակութիւնը, որ անշուշտ իր առանձին կարեւորութիւնը ունի մեզի՝ Ռ. Գոլէճի ընթացաւարտներու համար, բայց նոյն ատեն ալ կը պարունակէ խիստ շահեկան ծանօթութիւններ Մասիսի բոլոր ընթերցողներուն համար առհասարակ, որոնք կը հետաքրքրուին կրթական գործով ընդհանրապէս եւ այդ քառասնամեայ ամերիկեան հաստատութեամբը՝ մասնաւորաբար։

Երեսն մեծագիր էջերէ բաղկացած հըրատարակութիւն մըն է այն, որ կը կրէ «The Robert College Alumnus» անունը։ Զորդարուած է Տր. Համիլինի, Տր. Ուօլպըրնի, Տր. Լոնկի եւ Մր. Ռոպէրթի կենդանագիրներովը ինչպէս նաեւ տասնի չափ պատկերներով՝ չէնքին զանազան մասերուն։

Տր. Համիլինի անունը քաջածանօթ ըլլալու է մեզի ամէնուս։ Այդ հոյակապ անձնաւորութիւնը անձամբ ճանչցողներ ճանչցեր եմ, իր պատկերը միայն ծանօթ է Ռ. Գոլէճի ընթացաւարտներու մեծագոյն մասին, քանզի շատ կանուխէն բաժնուեցաւ ան՝ Պօլսէն եւ իր հիմնարկած հաստատութիւնէն։ Ռ. Գոլէճը սակայն իր ուղղակի աշխատութեան յիշատակարանն է ու պիտի մնայ, նոյն իսկ եթէ նրա թական ա՛յն հոյակապ չէնքը դադրի գոյութենէ։ Կան մեր մէջ այնպիսիներ, որոնք կը յիշեն Տր. Համիլինի մատուցած անդին ծառայութիւնները 1865ի ահաւոր համաճարակին առթիւ։ Ողջ են դեռ ականատեսներ, որոնք հիացումով կը պատմեն թէ ի՞նչպէս այդ մարդասէր անձը կը պատէր նաեւ հայաբնակ թաղե-

րու մէջ, կ'այցելէր պանդուխտներու խանրերէ անձամբ կը խնամէր քուերայէ բռնուող խեղճերը։ Ասի պատմութիւնն է մեզի համար, որով մնացած է տակաւին փորձաբութեան դէմ իր գործածած եւ ժողովրդականացուցած դեղը, որ «Համիլինի բաղադրութիւն» անունով պահուած է մինչեւ այսօր։

Աւելորդ է թերեւս յիշել թէ Տր. Համիլին իրեւ միսիոնար եկաւ Թուրքիա։ Երեսուն տարիի չափ վարեց Պէպէքի Աստուածաբանական Ճեմարանը, որ պատրաստեց Բողոքական Հայերուն նշանաւորագոյն քարոզիչներն ու գործի մարդերն։ Իր ատենի ականաւոր Հայերուն համակրանքը դրաւ իր անխափ ու Ս. Գրքի աշխարհաբար թարգմանութեանը մէջ ունեցած էր կարեւոր դեր մը։ 1877ին Ամերիկա վերադառնալով՝ հոն կը գրաւէ խիստ կարեւոր դիրք մը Աստուածաբանական վարժարանի մը մէջ ու ապա հինգ տարի կը վարէր ծանօթ ամերիկեան գոլէճի մը անօրէնութիւնը։ 1900 օգոստոս 9ին, երկար տարիներու օգտակար ծառայութենէ մը վերջ կը մեռնէր իր ծննդավայրին մէջ։

Շատ վայելուչ էր անշուշտ որ իր հիւնած վարժարանին ընթացաւարտներուն կողմէ հրատարակուած այս առաջին տետրակին մէջ աչքառու տեղ մը գրաւէին իր կենսագրութիւնը եւ իր պատկերը։ Ու երախտաւորական այս արձայայտութիւնը աղէկ կերպով կատարուած է արդարեւ։

Ռ. Գոլէճի նախկին ուսանողներուն յիշատակեան մէջ՝ քով քովի տեղ մը կը բռնեն Տր. Համիլինի եւ Մր. Ռոպէրթի անունները, քանզի անոնց պատկերները քով քովի կ'աւուած են միշտ վարժարանին մէջ։

1856ի ատենները Կ. Պօլիս կուգայ Մր. Ռոպէրթ անուն Ամերիկացի մը, որուն Տր. Համիլինի հետ ծանօթալը լո՛կ զիպուածի մը, անակնկալ մանրադէպի մը արդիւնքն էր։ Մր. Ռոպէրթ պարզ այցելուի մը հանգամանքով եկած էր Պօլիս, այդ զիպուածական ծանօթութիւնէն վերջ սակայն, այս երկու Ամերիկացիները մտերիմներ կը դառնան, ու Տր. Համիլին առիթը չի փախցունելով՝ կը պարզէ իր փափաքը իր հարուստ ազգակցին՝ Մր.

Ռոպէրդ պարզապէս կը դրաւ Տր. Համիլինի անուշ բնաւորութիւնէն ու բարձր կարողութիւններ կը նշմարէ անոր մէջ և կը խոստանայ վճարել 30,000 տալար Տր. Համիլինի մտադրած վարժարանին հիմնարկութեանը համար : Եւ այսպէս կը հիմնուի Գոլէճը 1863ին , քանի մը տարի շարունակելով Պէպէքի հին չէնքին մէջ : Մը. Ռոպէրդ շատ կարեւոր յաւելումներ կ'ընէ իր նախապէս խօստացած գումարին վրայ , որ վերջապէս կը յանգի 200,000 տալարի :

Գոլէճին հիմնադրած տեսնուած քառակուսի հին չէնքին հիմնաքարը կը դրուի 1869 յուլիս 4 ին : Շէնքին համար կը ծախարի 12,000 անգլ. սակի , եւ 1871 մայիս 15ին կը կատարուի հանդիսաւոր բացումը :

Շէնքին աւարտութենէն վերջ կը փնտռուի յարմար անուն մը . զանազան թելադրութիւններէ ետքը՝ վերջապէս կ'որոշուի «Ռոպէրդ Գոլէճ» անունով մկրտել զայն , որուն զէմ շատ կը բողոքէ մեծանուն նուիրատուն՝ Մը. Ռոպէրդ . բայց անօգուտ տեղը , քանզի ա'լ այդ անունով կը ճանչցուէր վարժարանը :

Համիլին եւ Ռոպէրդ , ահա՛ երկու անուններ զորոս կարելի չէ բաժնիլ իրարմէ , երբ աչքի առջեւ բերենք այդ հաստատութեան հիմնարկութեան պատմութիւնը : Համիլին եղաւ բուն յղացողը Ռ. Գոլէճի , զոր սակայն Ռոպէրդ ծնցուց : Վարժարանին մէջ քով քով կախուած էին ըսի առնոց պատկերները , ինչ հարկ կայ անոնց դիրքը փոխել՝ մեր յիշատակեան ու դատողութեան մէջ :

Տր. Համիլին եւ Մը. Ռոպէրդի պատկերներուն հետ բնական էր զննել նաեւ Գոլէճի միւս նշանաւոր զոյգին Տր. Ուօլպըրնի ու Տր. Լոնկի պատկերները , Տր. Ուօլպըրնի վրայ կենսագրական ո՛ր եւ է ծանօթութիւն չի կայ այս տեսարակին մէջ , ինք ողջ է գեռ ու ա՛նքան հանրածանօթ՝ իր զրաւած բարձր դիրքովն ու կատարած կրթական մեծ գործովը : Ամէն ընթացաւարտ յարգանքի խորունկ զգացում մը կը տածէ անոր մասին , որ իր անկրօն սկսած աշխատութիւնը կը շարունակէ տարիներէ ի վեր՝ աննկուն եռանդով : Գոլէճին ուղեղը ու ծուծն է Տր. Ուօլ-

պըրն , ու մեզի՝ նախկին ընթացաւարաններու համար անկարելի է երեւակայել առանց Տր. Ուօլպըրնի՝ Ռոպէրդ Գոլէճը : Իր ազդեցութիւնը , ամէնուն վրայ իր թողուցած պատկառանքը կարելի չէ բացատրել անոնց , որ չեն ճանչնար զինքը , կամ չեն ապրած Գոլէճին կեանքը : Ու բոլորիս մաղթանքն է որ մեր «Alma Mater»ը զեռ երկար տարիներ վայելէ հիմնադրին փեսային՝ այս արժանաւոր Տնօրէնին հովանաւորութիւնը .

Տր. Լոնկի մասին կը փափաքէի քիչ մը երկար խօսիլ , ինչպէս ըրած է այս տեսարակը . բայց՝ անցած օգոստոսին այս սիւնակներուն մէջ իսկ յօդուած մը նստիլած եմ արդէն անոր , իր Գոլէճէ մեկնումին առթիւ , որ նաեւ պիտի ըլլայ եղեր իր մեկնումը այս աշխարհէն : Անցած յուլիս 28ին Լիվրուլի մէջ կը մեռնի Տր. Լոնկ , որ իր հայրենիքը՝ Ամերիկա երթալու համար մեկնած էր Պօլիսէն :

Տր. Լոնկ եւս Տր. Համիլինի նման նշանաւոր ծառայութիւններ մատուցած էր «քօլէրայի տարին» : Գոլէճին ամենէն աւելի սիրուած դէմքերէն էր անտարակոյս : Իր դասերը , ինչպէս ըսած եմ ուրիշ առիթով մը , միշտ կը համեմէր հաճելի պատմութիւններով : Քաղցրաբարոյ էր , Բ. Հիսարի աղքատներուն պաշտելին ու վարժարանին աշակերտներուն բարեկամը : Ասոնք ամէնքը շատ պատշաճ կերպով ներկայացուած են այս տեսարակին մէջ , ընթացաւարտի մը երկար բաց նամակին մէջ , որ ուղղուած է ընկեր ընթացաւարտի մը : Ռ. Գոլէճի բոլոր ընթացաւարտները եւ ուսանողները պիտի յիշեն Տր. Լոնկի հայրական հոգածութիւնը եւ բարեբարութիւնը , նոյն իսկ երբ չի կրնան բան մը յիշել անոր աւանդած գիտութեան դասերէն :

Տեսարակին մնացած մասերն աւելի կը հետաքրքրեն . Ռ. Գոլէճի ուսանողներն ու ընթացաւարտները քան թէ ընդհանուր ընթերցողները , թէեւ հոս ալ խմբագիրները կըցած են պահել իրենց հրատարակութեան ընդհանուր շահեկանութիւնը :

«Մահագոյժ»ի բաժնին մէջ զրուած են վերջին տարիներուս մեռնող ընթացաւարտ-

ներու համառօտ կենսադրութիւններն : Ու
Ռ. Գոլէճի ընթացաւարտ մը հպարտ կը զգայ
ինքզինքը , որ ահանաւոր սոնճաւորութիւն
ներու կցուած է իր սնունդը , իբրեւ ընթացա-
ւարտ նոյն վարժարանին :

«Ընթացաւարտներու մասին» խորագրով
հատուածին մէջ խօսուած է այն Ռոպէրդ-
եաններուն վրայ , որոնց կեանքին մէջ նըշա-
նակելի փոփոխութիւններ տեղի ունեցած են
վերջերս : Ու հոս ուրախութեամբ կը դիտեմ
թէ յիշուած է Պատ. Յովսէփ Ճէճիզեանի ա-
մուսնութիւնը , նամանորինակ բարեմաղթու-
թիւններով . . . ամուրի ընթացաւարտներուն :

Յրկար պիտի ըլլար մէկիկ մէկիկ խօսիլ
աւարակին միւս մասերուն վրայ : Պատկեր-
ները զարմանալի յիշատակներ կ'արթնցունեն
մարդուն միաքին մէջ : Մանաւանդ ա՛յն հին
ուսումնասորահին պատկերը . ամէնքս ալ —
նախկին Ռոպէրդեաններ — անցեր ենք այդ
սրահէն . նստեր ենք այդ նոյն նստարաննե-
րուն վրայ , եւ ամենքս ալ աւելի կամ պա-
կաս խօրունկ ապաւորութիւն մը ձգեր ենք ,

այո՛ , փորագրեր ենք մեր անունները այդ
խեղճ զրասեղաններուն վրայ , ուր հարթ տեղ
մը գտնելու գմարութիւնը կը քաշէ ան-
շուշտ ներկայի ուսանողը :

Կարեւոր կէտ մը սակայն պէտք է մոռ-
նալ . Ռ. Գոլէճ մինչեւ հիմա ունեցած է 401
ընթացաւարտ : Ատոնցմէ 355ը ողջ են , եւ
ուրախ եմ դիտել թէ ատոնցմէ 118ը Հայ են :

Ուրախութեամբ կը նշմարեմ զարձեւալ թէ
պատուաւոր ներկայացուցիչ մը ունինք հայ
ընթացաւարտներս՝ յանձին Տօրթ. Հրանտ
Մատթէոսեանի : Կը սպասենք իրմէ որ իր
ազգակից ընթացաւարտներուն անունը բարձր
պահէ ինչպէս ինքն ալ իրաւունք ունի սպասե-
լու որ մեղմէ իւրաքանչիւրն ալ կատարէ իր
պարտականութիւնը հանդէպ ընթացաւարտ-
ներու մարմնին որուն ա՛յնքան սիրուն մէկ
հրատարակութիւնը առիթ տուաւ Մախիթ
մէջ պրպտել հին յիշատակներ՝ Ռոպէրդ Գոլէճէ :

ՏՈՒԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԱՂԶԱՆ ՍԽԲՏԸ

Թըռչուններուն դանդաղ թռուիչքն ըսպիսակ
Երկինքին մէջ կը ձիւնէ . ու , դէպի վեր ,
Կ'ելլէ բոյր ծաղիկներուն , արփազդակ՝
Որպէս քէ ան սիրոյ մէջը քաթխըրէ :

Ամբողջ գիշերն , անհուն , լուսնի լոյսին տակ ,
Թաւեայ սիւփին իր այսին վարդն էր քսեր :
Եւ , բուխ արծաթ աչեքուն մէջ կապուսակ ,
Անուրջ մ'աղուոր նրբուլած էր նոր լոյսեր :

Կը սիրեմ քեզ — ըսած էր ան , զաղսնաբար .
Ու կը խորհէր անոր , ընդմիջ մըսայառ ,
Այն նայուածքին քաղցրութիւնը յիշելով :

Ո՛վ զարթունք աղջկան սրբին , դէպի սէր .
Ո՛վ առաջին տոփը , երա՛զ անխառն :
Արեւոյսին հետ՝ կոյսն արդէն կը սիրէր :

ՎԱՀՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ԽՂՈՒՆՁԻ ՀՈԳԻ

«Յիմարներ են անոնք՝ որ անձ-
նասպանութիւն կը քարոզեն . . .
. . . Սպրիկ կ'ուզեմ, կուզեմ տես-
նել վերստին, ճաճանջաւեա եր-
կինքը : Օհ, որքան հրաշալի է
արեւը» :

ՏԻԻՊԻԻ ՏԲ ԼՈՅՈՒՆԷ

Կեանքի ու մարդկային կիրքերու ամէնէն
հզօր նկարիչը, Շէյքսպիրը, առանց հմուտ
կենդանարան մը ըլլալու, իր անդերազանցելի
սուր intuitionով, կարգաւոր ամէնէն թուա-
մորթ սողունին մէջ անդամ գոյութիւն ունե-
ցող հոգեկան անձանոթ կիրքերը, յափշտակ-
ուած է անոնցմով, հոգիի ամէնէն վրդով-
ուած յափշտակութիւններով :

Ու զիտէ՞ք թէ, հոգեկան զգայնութեան
բաժնին մէջ, սողուններուն ամէնէն պազե-
րեալ, ամէնէն սատանայականը, խղունջը,
իւր կեանքի խորհրդաւոր պատմութիւնը ունի,
կենդանական յուզիչ զգացման մը ամէնէն
աներեւակայելի գերազանցութիւնը :

Գլուտ Պէշար կը պատմէ թէ, սատանա-
յական եղջիւրներով այս ազեղ սողունը, իր
թուլամորթի ախմարական խելքովը, անմը-
ցելիօրէն վայրագ սիրահար մըն է : Ու երբ
ան, տարփածուն պատեանին շուրջը իր
քծինքներուն ու սիրաբանութիւններուն մէջ
մերժուի, բանական կենդանիներու անգամ
չարուած քաջագործական եղբայրացութեան մը
կը զիմէ : Մերժուած տարփատրի իր ամո-
թալի ստորնացումին մէջ, ա՛լ աշխարհքը աշ-
քին նեղ գալով, թուլամորթի իր փքացած
բարկութիւնը կ'աւելնէ անձնասպանութեամբ,
սողալով զանուած ամէնէն ցից հոգին գա-
գաթը, ու հոնկէ ինքզինքը վար նետելով,
գետակի մը խորը, կամ հերձոտ ժայռերուն
վրայ, ուր իր թոյլ մարմինը կը սմբի, ճըզ-
քրուած պատեանին մէջ, ու հոգին կը
փչէ :

Ու ցողաթուրմ առաւ մը, այգեստան-
ներու պատերուն քովն ի վեր քալած առնն,
երբ գետինը ճզմուած խղունջի մը աղտոր

զիակը կը տեսնէք, միաքերնուդ կ'անցընէ՞ք
թէ սիրային առաւի մը զոհն է ան :

* * *

Բարիզեան թերթերը այս շարթու ցաւով
արձանագրեցին մահը իրենց ամէնէն սիր-
ուած թերթօն-վիպագիրներէն մէկուն, Տիւ-
պիւ ալ Լաֆօնէի, որ սովորական feuille-
toniste մը չէր, անոնցմէ որոնք սող չ'ինե-
լու համար ամէնէն չնչին դէպքը յայտա-
ւուրքի չափ կը ճողեցնէին, կը ծամեն, կը ծամ-
ծըմեն, օրերով դուրս ուռեցնելով :

Իր «Կաքոնի աւելնով», ու «Բարիզեան
կեանքին յատուկ dessousներու նկարչու-
թեան», ինչպէս նաեւ «վայրագ իրապաշտու-
թեան» կարողութիւններով, Տիւպիւ ալ Լա-
ֆօնէ արտագրած է վէպեր ու նորավէպեր,
որոնք միայն թերթօնի նշանակութիւն մը
չունին :

Իր գործերուն վրայ ուսումնասիրութիւն
մը ընել կարելի չալիս ըլլար հոս, — բան մը
զոր իր հայրենակիցները անգամ չըրին, որով-
հետեւ այնքան դժուար է վերլուծել վիպագ-
րի մը գործին ամբողջութիւնը, ու միութեան
զիծ մը դնելով անոնց մէջ, սրոյ գաղափա-
րական մը ցայտեցնել, դադափարներու յա-
րատառան ու անկայուն հոսանքներով տար-
ուերուող անսահման էջերէ :

Կ'արժէ մինակ վեր հանել այն անգերա-
զանցելի կերպով յիշարական ըմբռնումը
կեանքի նշանակութեան վրայ, որուն զոհ
կ'երթայ այս օգտակար գրագէտը, վայրկե-
նական հապճէպ վճիռով մը, եւ որուն վրայ
ինք ալ պիտի կրնար խնդալ, եթէ անցընելէ
կտքը մտքի այդ նոպան, ողջ ըլլար այս
վայրկեանիս, քանի որ, իր մէկ գեղեցիկ
վէպին մէջ, Rêve d'un Viver, — «մեռելա-
կան պատմութիւն մը, անձնասպանի մը կող-
մէ իր գերեզմանին մէջ գրուած տեսակ մը
յուշատետր», — այնքան գեղեցիկ կը տեսնէ
կեանքը, գրելով «Ո՛հ, ապուշութիւն ըրի
անձնասպան ըլլալով . . . Օ՛հ, կ'ուզէի վե-
րադրիլ : Ի՛նչ կ'ըլլար որ լոյս տեսնէի նո-
րէն . . . Յիմարներ են անոնք՝ որ անձնաս-
պանութիւն կը քարոզեն : Սպրիկ կ'ուզեմ,
կուզեմ տեսնել վերստին ճաճանջաւեա եր-
կինքը : Օ՛հ, որքան հրաշալի է արեւը» :

Ինք՝ զոհն է անտանելի զխուս-ցաւի մը , որուն չէ կրցած զիմադրել՝ մեղի յուսահատութեան մը մէջ , ինք՝ որ քարոզած է «կամքին յազմական ու ամենակարող հզօրութիւնները» , «հոգեկան փորձութիւններու» դէմ :

«Անտանելի զխուս-ցաւէ մը կը տառապէր, — կը գրեն թերթերը, — եւ գրեթէ բան չէր ուտեր» : Սկսուած վէպի մը աւարտումէն ետքը , մտադրութիւն ունէր գլեղ քաշուելով հանգչելու : «Պէտք է զօրացուցիչ դեղեր առնեմ , — ըսած էր վերջին օրերն ալ, — անցընելիք վայրկեան մըն է ասիկա , եւ կը յուսամ թէ նորէն կը գտնեմ ուժերս ու առողջութիւնս» : Բայց ցաւերը սաստկացած էին հեռզհեռէ , ու ա՛լ չկրնալով զիմանալ անոնց , կ'որոշէ վերջ դնել կեանքին , ու տանտիկինը կը ճամբէ սենեակէն :

— Կը խնդրեմ որ մինակ թողուս զիս, — կըսէ, — պէտք է հազուիմ չքուիմ քիչ մը :

Կինը ճամբելէն ետքը , ննջասենեակին պատուհանը կը բանայ , ու ակնոյի մը վրայ ելլելով , ակնաբկ մը նետելով դուրս , կը տեսնէ տանտիրուհին , թիկնաթոռի մը մէջ ընկողմանած , պատին տակ : Ու վախալով մահացու յուզումէն , զոր կրնար ունենալ կինը , իր անկումին ժամանակ , ետ կը քաշուի , կը գտնայ իր աշխատանոցը , հոնկէ կը բանայ պատուհան մը , ու վճռապէս , կը նետուի պարապութեան մէջ : Կը փռօրի գետին , ահուի ճիչ մը արձակելով : Դանկը կը խորտակուի , եւ սրունքին ռա՛րրները , մինչեւ ծունկը , ներս կը մտնին :

Ոտականութիւնը հասնելով , մարմինը տուն փոխադրելէ ետքը , դրասեղանին վրայ կը դնէ հապճէպով գրուած քանի մը տող . «Դիտու ցաւէ բռնուած , եւ ինքզինքս հիւսանդ զգալով , կեանքը ինծի բռնադաճած էր : Չէի կրնար աշխատիլ , հետեւարար նախընտրեցի մեռելի » :

* * *

Իբր անձնապահ , կարգ մը վերացական դատարկ տրամաբանութիւններու անոր ճակատին դրոշմած անգոռնալի դատապարտելութենէն սասանելով չէ՞ որ , Ֆրանսացի վիպասանին այս հիւսանդոտի արարքը գէշ նըշա-

նակութիւն մը կ'առնէ , կեանքը դեղեկօրէն ըմբռնողի մը աչքին : Ոչ ալ հեռաւոր ճոռմարան դամբանականի մը պէտք կայ , գերեզմանին վրայ անոր՝ որ ա՛լ չպիտի դառնար , եւ որ զոհ կերթայ հոգեկան ու մտային տրամադրութեանց գէշ վայրկեաններու , եւ քիչ մըն ալ խելքը ու դատողութիւնը գործածելով իբր յիմարական ղեկ , զխուս-ցաւի մը համար անձնասպան ըլլալու չափ , որքան ալ բուռն , անտանելի ու խելայեղիչ ըլլայ ան :

Մինակ , հեղնական ու ցաւազինորէն յուսահատ քմծիծաղով մը , խնդալս կուգայ սաբշկութիւն ըսուած ողբալիօրէն սնամէջ ու խորէակտն աճաբարութեան կարծեցեալ հակայաքայլ առաջդիմութիւններուն վրայ , որ մարդկային մարմինի անգամներէն ամենէն զգաստին չկրնար խօսք հասկցնել՝ սաստկով տարաբաղ լիպասանին գանկին մէջ յազուած գլխուցաւ-փոթորիկը :


Ու միւս կողմէ «հոգեկան փորձութիւններու դէմ» «կամքին յազմական ու ամենակարող հզօրութիւնները» ջատագովող այդ մարդուն հօգին նմանցնելս կուգայ թուականութիւնը խղունջին հօգին , որ իր դառնութիւններուն սփոփանքը ինքզինքը ժայռէն վար նետելուն մէջ կը գտնէ :

Ա՛, երեւակայեցէ՛ք ի՜նչ սպառ որրեւայրի մը պիտի ըլլար աշխարհը , եթէ ամէն գլուխը , ականջը , քիթը ցաւող , անձնասպանութեան մէջ գտնէր իր ցաւերուն անքումը :

ՄԻԼԻԱՍ

Հայ արուեստագէտի մը փայլուն յաջողութեան լուրը կը հաղորդեն Գահիրէէն Արեւելի Պ. Վարդան Մախոսեան , ծանօթ բմիչկ Տօք Մախոսեանի եղբայրը , 81 կտոր իւղանքի նկարներ ցուցադրել է «Սէրք Արդիադի» սրահին մէջ , մեծ մասով էգիւսներ ու ընդհանրապէս յաջող դորձեր որոնք ցոյց կուտան երիտասարդ նկարիչին զիտողի ու արտայատողի հազուադիւտ սաղանդը : Պ. Վարդան Մախոսեան արդէն զնահատուած է Պէրլինի մէջ եւ իր նկարներուն մեծ մասը գոհացուցիչ պայմաններով վաճառած է Գերմանիոյ մէջ :

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ՆԵՐՈՆԱ

Պ. Է. Պ. ԲԱՆԻՆ, ՀԱՅԶԵՐ

Թիւ 2

— Ո՛հ, ըստե՛ս ժպտելով, հապա՛ քեզմէ՛ զատ որո՞ւնը կրնար ըլլալ : Այծարած Պէրօէն զատ մարդ չիգար հոս, յայտնի բան է որ անկէա յուշատետար չունի :

Առաւ յուշատետարը՝ նրբամասն ու ճերմակ ձեռքերէն մանկասի աղջկան որուն դէմքը արեւակէզ եղած չէր, այլ միաձեւօրէն տարածուն ճերմակ եւ քաղցր գոյն մը ունէր որ իր սեւ աչուքներուն փայլը կ'աւելցնէր եւ մերթ ընդ մերթ վարդի նրբին կրանդ մը կը ցուցնէր : Տասնըեօթը տարեկանէն աւելի ըլլալ չէր կարծուէր ան . դէմքը, որուն գիծերը սրչափ ալ փափուկ ու մանկական ըլլային դեռ, խոհուն արտայայտութիւնէ մը զուրկ չէր, բաւական է որ քիչ մը գոցէր իր շուրթերը : Սեւ կերպասէ թանձր շալ մը կը պաշտպանէր անոր պարանոցն ու ծոծրակը, առանց ծածկելու ականջները, որոնք այնպէս կը նկարուէին իրր թէ մաքուր փղոսկրի մը մէջ կ'արտաւած ըլլային :

— Քանի որ ինձմէ՛ զատ մարդ չերթար այդ բլուրին վրայ, յարեց վայրկեան մը լռութիւնէ ետքը, ուրեմն ո՞վ տարաւ գլեզ հոն : Լերան վրայ ասկէ շատ աւելի դեղնցիկ տեղեր չեն պակսիր, ուրկէ աչքը աւելի հեռուները կրնայ դիտել : Եւ յետոյ, այն ծաղիկները զոր գլխարկիդ վրայ կը տեսնեմ, այնտեղի քարաժայռերուն ծերպերուն մէջ չեն բուսիր :

— Ես, չըջագայութեան ժամանակ կորսուեցայ, պատասխանեց աղջիկը մինչեւ աչքերը կարծրելով : Պատյա մը ընել կ'ուզէի այս մօտ տեղերը, ուր մօրս մէկ հօրաքոյրը կը բնակի . երբ վերադառնալ ուզեցի, տեսայ որ շատ ուշ էր, վախցայ, ուզեցի ճամբաս կարճեցնել ու մալորեցայ : Երբ բլուրին վրայ հասայ, հեռուէն մեծ ճամբան նշմարեցի :

Ահա այն ատեն գտայ ձեր յուշատետարը ու խորհեցայ Լէօքարափին տունը բերել, բայց հոն հասնելէ առաջ՝ հոս ձեզի հանդիպեցայ :

— Բայց պիտի ըսե՞ս թէ ինչո՞ւ համար կը կարծես որ ես միայն կրնամ կորուսած ըլլալ այդպիսի առարկայ մը :

— Որովհետեւ . . . որովհետեւ . . . անգամ մը դձեզ միեւնոյն տեղը նստած տեսայ . շատ զգուշութիւն ըրի որ չխանդարեմ : Այն ատեն շատ բնական եղաւ այս բանը, նայեցայ եւ գրուած ռոմանտներն տեսայ անոր մէջ : Երգում կ'ընեմ որ, հակառակ փափաքիս, չկարգացի զանոնք : Ո՛վ դիտէ որո՞ւն ուղղուած են անոնք :

— Եւ ինչէ՞ն դիտես թէ ես ռոմանտներ կը յօրինեմ :

— Ո՛հ, ըստե՛ս աղջիկը ճակատը չոյելով՝ ուր մաղերը աչուքներուն վրայ կ'իյնային գրեթէ . անշուշտ բանաստեղծ մըն էք դուք, կոմս ճիւղքօմօ . ամէն մարդ դիտէ այդ բանը, եւ ես կարգացած եմ ձեր քերթուածները : Բայց . . . ո՛հ, այս մասին խօսք չպիտի ընէք բնաւ, այնպէս չէ՞ . անուշադրութեամբ բերնէս փախցուցի . . . Սօֆիան՝ ձեր մօրը, տիկին կոմսուհիին քովը սպասուհի մըն է . . . կը խոստանաք, այնպէս չէ՞, թէ չպիտի յանդիմանէք զայն :

— Կը խոստանամ . ինչ յանցանք գործեմ է :

— Օր մը խեղճ սպասուհին ինծի փոխ տուաւ ձեր ռոմանտները՝ կարդալու համար, սակայն շատ դաղանի կերպով, եւ միայն մէկ գիշերուան համար, ըսելով թէ արիկին կոմսուհին պէտք չէ բան մը կ'ուսէր : Այդ ամբողջ գիշերը աչքս չգոցեցի, ամբողջ հատորը կարդացի ակիզքէն մինչեւ վերջը : Յաջորդ առաւոյ գիրքը վերադարձուցի Սօֆիային :

Մեծ խնամով պահեցի զայն, մեռաքսի կողքի մը մէջ փաթթեցի: Ձիւ չպիտի բերան տաք, այնպէս չէ՞:

Աղջիկը իր խօսակիցը կը դեմէր վատահ գէմքով մը, որուն վրայ սակայն զուարթութեան հրանգ մը կը ցոլանար. այնչափ շնորհազեղ էր ան, որ երկտասարդը չկրցաւ անոր առջեւ վարկեան մը տկնապիշ կենալէ ինքը զինքը դեպքել, եւ չպատասխանեց անմիջապէս:

— Անունդ ի՞նչ է, սիրելի աղջիկս:

Աղջիկը արծաթաձայն քրքիշ մը արձակեց.

— Անշուշտ, պատասխանեց, զիս բնաւ չէք ճանչնար: Երկու տարիէ ի վեր բացուկայ էիք, եւ այդ ժամանակափոխոյն մէջ

— ամէն փարզ կ'ըսէ գոնէ — մեծցայ, մա. նաւանդ վերջին ժամանակներս. մինչեւ այն ատեն աղջնակէ մը քիչ մը աւելի մեծ էի: Եւ սակայն շատ անդամներ խօսակցած էք ինծի հետ, եւ նոյն իսկ օր մը ձեր պատրճաղմէն շաքարեղէնով լեցուն թուղթ մը նետեցիք պատուհանս. Բայց հիմա՞. . .

— Ներինա՛, դուք կ'ոմսը, զո՞ւն ես: Իրաւ որ շատ փոխուած ես: Երբեք չէի կրնար կարծել թէ այս աստիճան պիտի սիրունայիր. ձեռքդ ինծի երկնցուր, Ներինա՛, պզտիկ դրացուհիս:

Ներինա ձեռքը անոր երկնցուց առանց բնաւ վարանելու, առանց չիկնելու այն գովեստին վրայ զոր երկտասարդը ըրաւ անոր մատղաշ գեղեցկութեանը մասին: Ինքն ալ գիտակից էր իր գեղեցկացած ըլլալուն, եւ այս բանը իրեն այնչափ բնական կը թուէր՝ որչափ իր հասակին վրայ երկու տարիներ աւելցած ըլլալը:

— Գոհ եմ, կ'ոմս ծխաքափօ, տեսնելով որ տակաւին կը յիշէք զիս, ըսաւ, բարեկամական արտայայտութիւն մը ընծայելով իր դիմագծութեանը: Անտարակոյս չեմ զարմանար որ իմ վրաս բնաւ խորհած չըլլաք, երբ բացակայ էիք. ասկէ նախադաս բաներ ունէիք խորհելիք: Արդեօք մտապի՞ր էք ժամանակ մը հոս մնալ. Եւ ի՞նչպէս էք, ա՛հ, լաւ գիտեմ թէ ինչպէս էք. ձեր քերթուածներէն մակաբերեցի: Ձեզի համար շատ ցաւալի կը գտնեմ այդ բանը, կ'ոմս ծխաքափօ, մինչեւ

զուք ա՛յնչափ արժանի էիք երջանիկ ըլլալու:

— Ե՛ս, ինչո՞ւ համար ես ուրիշներէն աւելի արժանի եմ եղեր:

— Որովհետեւ. . . որովհետեւ զուք ա՛յնչափ զօրախա էք. . . Ո՛հ, ո՛չ, յարեց հապահալով՝ իր միաքը աւելի չաւ բացատրելու համար. . . որովհետեւ զուք այնչափ բարի էք եւ բանաստեղծական այնչափ մեծ տա. զանդ մը ունիք: Բայց պէտք է որ տուն վերադառնամ. Կուգէ՞ք ինծի ընկերանալ:

Իսկոյն չպատասխանեց. բայց երբ Ներինան քայլ մը առաւ, անմիջապէս հետեւեցաւ անոր, եւ կատարելապէս դիտեց որ ան իր թևիւ քալուածքը կը զանդուեցնէր, որպէս զի ինքը առանց նկուզելու կարենար անբաժան մնալ անիկէ:

— Դուն երկտասարդ ես տակաւին, Ներինա, ըսաւ. Երբ աւելի մեծնաս եւ երջանկութիւնն ու զօրախաութիւնը պէտք եղածին պէս ճանչնաս, պիտի տեսնես որ իրեն ընդհանուր օրէնքին կատարելապէս համաձայն է թէ, բարի մարդը, ճարտար բանաստեղծը, ինչպէս որ ըսիր, ամենէն զլծբախտ մարդն ըլլայ: Որովհետեւ եթէ այսպէս է իրերուն վիճակը, ուրիշներէն աւելի անպէտք է զգայ թէ բնութիւնը երջանկութեան համար ստեղծած չէ իր զաւակները: Անոր փիլիսոփայութիւնը իրեն կը սորվեցնէ թէ միշտ այսպէս եղած է. եւ այսպէս ալ պիտի ըլլայ միշտ: Եւ եթէ բանաստեղծ է, կրնայ այս բանը արտայայտել այնպիսի բառերով որոնք իրեն իսկ սարսափ ազդեն: Բայց կը հաւատո՞ւ թէ ցաւ մը աւելի հանդուրժելի ըլլայ, անոր համար որ արտայայտիչ խօսքերով կը նկարագրուի: Միթէ՞ կը կարծես թէ հիւանդութիւնս ու մարմնական տկարութիւնս նուազ զգամ, երբ հայելիի մը մէջ զիս տես ինքզինքս:

— Ձեմ գիտեք, պատասխանեց աղջիկը վայրկեան մը լռելէ ու մտածելէ ետքը, եւ սակայն ձեր աչքերը հայելիի մէջ ալ չէ՞ք տեսներ: Ո եւ է միթէ արութիւն, ո եւ է մեղմացում չէ՞ք կրնար յուսալ, երբ կը տեսնէք թէ անոնք յստակ են եւ թէ ի՞նչպիսի իմացականութիւն կ'արտաբայուի անոնց մէջ: Այսպէս են նաեւ ձեր քերթուածները, ինչ-

պէս որ կը հաւատամ, Ես ապէս աղջիկ մըն
եմ, եւ թերեւս իմ շաղակրատութեանս վրայ
ծիծաղեմք. բայց ինծի այնպէս կը թուի թէ
անոնց մէջ հոգիի մը բղխիլը կը տեսնեմ,
հոգի մը՝ որ ուրիշներու գրուած քննութեան հո-
ղէն շատ տարբեր է, եւ ան է որ կը ներ-
շնչէ այս գեղեցիկ տողերը. Եւ եթէ անոնք
ախուր ներդաշնակութիւն մըն ալ ունին,
այն ալ հոն ամէնէն կարող միութարութիւն
մը պիտի ըլլար, նման այն միութարութեան
զոր մարդ կը զգայ ակնարկը հայելիի մը մէջ
տեսնելով: Ներեցէք ինծի մտքէս անցած
ամէն բան ձեզի ըսելու համար: Ես միշտ
մինակ եմ. մէկը չսորվեցէր ինծի թէ ի՞նչ
պէտք է խորհիլ:

— Սիրելի աղջիկ, գոչեց անոր ձեռքը
բռնելով. փառք տուր Աւատածոյ որ օտարու-
տի մտածումը մը չգար խանգարել քու ինչդ,
ինչպէս որ ես ալ քեզի չնորհակալ կ'ըլլամ
արտայայտած այս սիրուն գաղափարներուդ
համար, որոնք ինքնաբերաբար բղիւնցան քու
սրտդ: Մէկ բանի վրայ միայն կը զարմա-
նամ. այս քերթումները, որոնք այնչափ
աննշան են եւ որոնց միօրինակութիւնը այն-
չափ ճարտար մարդոց կողմէ կը քննադատ-
ուի, ի՞նչպէս կրցած են քեզի հաճելի թուիլ,
Թերեւս անոր համար միայն կ'ըսես, որ սի-
նտեա քեզի սորվեցուցած են թէ բանաս-
տեղծները ախորժ կը զգան իրենց դուլուրը
լսելէ:

— Ո՛չ, ստուգիւ ո՛չ, պարոն, հաւաս-
տեց աղջիկը լուրջ ձայնով մը. ինչ որ ըսել
կ'ուզի ըսի, եւ կ'երգնում որ չհասկցայ թէ
ինչորք ուրիշ կերպ կրնար ըլլալ. Բայց նոյն իսկ
չհասկցած բաներս, օտար կամ խրթին բա-
ռերը միայն աչքով չէի կարդար, հաւատա-
մ որ բարձր ձայնով ալ կը կարդայի: Ու շտա-
տեղեր կան դարս ամբողջովին միաքս պահե-
ցի, այնպէս որ հիմա « Զայր մեր »-ի պէս
զիտեմ զանոնք. Ամէն բան ախարագեցիկ է
հոն, շատ ախարագեցիկ. բայց անոր ունե-
ցած քաղցրութիւնը կը գերազանցէ մինչեւ
հիմա իմ լսած եւ երգած երգերու քաղց-
րութիւնը. Ես ալ ինքզինքս այնչափ ուրախ
չեմ զգար հիմա որչափ առաջ, չգիտեմ ինչո՞ւ
համար. Տարի մը առաջ, ո՞վ կրնար գիտ-

նայ թէ ձեր քերթումները ինծի այսպէս
հաճելի պիտի թուէին: Այն առեւ Էլարելէ,
ածնի օրերը դաշտը շրջապայելէ ու ծաղիկ-
ներ քաղելէ աւելի հաճոյալի դադուր չու-
նէի, միշտ ապօր . . . :

Ներինա լսեց, եւ ճամբուն եզերքը ծռե-
ցաւ ծաղիկ մը փրցնելու համար:

— Մինչդեռ այսօր, հարցուց երիտասար-
դը, ի՞նչ կը զգաս:

— Երեք շաբաթ ու երեք օր է որ 17րդ
տարիս բոլորեցի: Ես արդէն տարիքոտ եմ,
այնպէս չէ՞, բայց ոչ այնչափ տարիքոտ՝ որ
չկրնամ պարել. Նշնան ու Մարիան ինձմէ
աւելի տարիքոտ են, եւ սակայն ինձմէ շատ
աւելի աշխոյժ են: Սաոյդ է նաեւ որ անոնք
աւելի բարձրահասակ են եւ աւելի դօրասուր
կազմ ունին, իսկ ես . . . : Երբ կը սկսիմ
երգել, խնդալ, եռանդաղին պարել, եւ երբ
չուրջս մարդիկ կը խառնին, անմիջապէս
սրտիս մէջ պղտիկ խայթում քի պէս բաներ
մը կը զգամ, — հո՛ս սիրտը ցուցնելով, —
պէտք է որ կանգ առնեմ եւ հանդատանամ:
Վերադառնալ պարոն Մաթէօ, որ հօրս մօրա-
քեռորդին է, կ'ընէ թէ կ'անցնի, տարիքիս
յատուկ բան մըն է եւ թէ . . .

Ներինա լսեց խաղոյն. Երկու քն ալ ճամ-
բուն մէկ անկիւնը կանդ առած էին ուրիշ
աւելի լաւ կը տեսնուէր ծովը. արեւը, մութ
կարմիր դաշտ մը դարձած, հոն մխրճելու
վրայ էր: Երիտասարդը ակնապիշ դիտեց այն
մատղաշ գէմքը, տեսաւ թէ չուրթերը որչափ
ամոքունած էին եւ աչուրներուն փայլը ո՞ր
աստիճան նոսրացած:

— Աղջիկս, ըսաւ, այս բարձրութիւննե-
րուն օդը առողջարար չէ քեզի համար: Հի-
մա կը յիշեմ թէ առեւ մը տեսած եմ քու
պարելդ, եւ գուն այն առեւն ամենէն կայ-
տառն էիր: Ինծի կը թուի տակաւին թէ տե-
սած եմ զքեզ գեղածուփ հիւսկէններովդ,
ինչպէս նաեւ այն երիտասարդը՝ որուն հետ
զլուս գլխու ապուլ կը պարէիր, վստահ
ան կը կարծէր թէ զինքը ծաղիկ կ'ուզէիր,
բայց դուն աւելի բարձրաձայն կը խնդայիր
անոր վրայ եւ դէմքդ ալ ուրախութիւնով
ու ոգեւորութիւնով կը բոցավառէր: Ու հի-
մա աւելի հանդարտ եւ աւելի ամբոյն ես:

Պէտք է մօրմէր խնդրէիր որ ձմեռը անցընելու համար զքեզ Անքօնա զրկէր : Այդ քաղաքը ազգական չունի՞ս :

— Ո՛հ, այո՛ . անդամ մը դացած եմ հոն, եւ հոն ասկէ շատ աւելի լաւ կեանք անցուցած եմ . յօժարակամ պիտի երթայի : Եւ սակայն — դարձեալ կարմրեցաւ — ասկէ ոչ շատ առաջ գո՛հ էի մեր տունը վերադառնալուն համար : Այն տեղի մարդիկ, մեր ազգականները, հարուստ են, խիկ մենք աղքատ : Այդ փաղուն բնակարանին մէջ ինքզինքս բոլորովին օտար կը զգայի, թէպէտ ամէն մարդ շատ աղնուօրէն կը վարուէր ինծի հետ : Երբ կրնայի, իմ ամենէն մեծ հաճոյքս էր փախչիլ, երթալ ծովուն եղերքը նստիլ ու հոն ամբողջ ժամ մը անցընել : Ինծի այնպէս կը թուէր թէ կուրծքիս վրայ ծանրացող բեռ մը կը վերցնէին : Տեսած էք ծովը, Պարոն : Բայց ինչո՞ւ կը հարցնեմ, բնականաբար տեսած էք, քանի որ ինձմէ շատ աւելի ծամբորդած էք : Կը տեսնէք թէ չիկայ բան մը որ զիս այնչափ հալածէ, որչափ ծովեղերքին երկայնքը երթեալիս, կամ հոն երկընցած մնալ, մտիկ ընել ալիքները որոնք կը խուժեն, կը բարձրանան, ետ կը քաշուին, յետոյ կը վերադառնան, նորէն կը հեռանան վերջապէս, երբ ցամաքը կ'արգիլէ անոնց խաժուժը, ու բոլոր ստանք կը կատարուին յաւիտենական օրէնքի մը համաձայն : Ասանք թէ եւ զբոսալի չեն ու չեն հաւասարիր քու քերթուածներուդ մէջ տկնարկուածներուն, բայց ես երբեք չեմ յօգնիր . անոնց մէջ կը մոռնամ իմ առանձնայտուիկ վիշտերս, անոնց մէջ կը մոռնամ իմ մեծնալս, չեմ գիտեր թէ երջանկութիւնը պիտի դա՞յ թէ անցած է արդէն՝ առանց ինծի զգալի բլրալու : Այն ատեն, երբ տեղէս կ'ելլէի ու մարդոց մէջ կը վերադառնայի, ներսիդիս այնպիսի ոյժ մը, այնպիսի հանդարտութիւն մը կը զգայի որ կը կարծէի թէ բան մը չէր կրնար դայն տկարացնել կամ անոր տեղի տալ, ինծի անանկ կը թուէր թէ ամէն ինչ որ ալ դար մարդոցմէ, վերջապէս շատ ոգորմելի բան էր այս ահարկու ծովուն, ինչպէս նաեւ դայն վարող Աստուծոյ կամքին տալիս :
— Ներինա՛, դոչեց լէօփարբի, նուաճ-

ուելով այն ձայնին հմայութենէն ուր հոգի մը կը խօսէր . լաւ գիտցիր որ բանաստեղծական ճիւղը ունիս . ինչ որ ըսիր ինծի հիմա կը բաւէր դայն գրի առնել, ուր ճիշդ այնչափ միտիթարութիւն եւ հաճոյք պիտի զգայնէր ընթերցողը, որչափ կարդալով Սօֆիայի քեզի տուած զրքոյկը :

Ներինա զլուխը շարժեց հառաչելով .
— Գրել չեմ գիտեր, պատասխանեց, եւ իթէ զրել ալ գիտնայի, ժամանակ չպիտի ունենայի : Ես կոմսուհի մը չեմ որ կարենայ ընել ու հրամայել ինչ որ ինծի հաճոյ կը թուի : Պէտք է որ մանեմ, կարեմ, ասեղնադարեմ, տունը բարեկարգ վիճակի մէջ պահեմ : Բայց դուք ուղեցիք միայն զուարճութան, ինչպէ՞ս կրնայի ձեր ըսածը ընել, ես որ ո՛չ գիտութիւն սորված եմ ո՛չ ալ զարմութիւն : Ես որ միայն կարողացած եմ Պետրարքայի հոյակապ գործերէն քաղուած զրքոյկ մը, մէկ երկու պատկերազարդ հին պատմութիւններ, եւ վերջապէս ձեր բանաստեղծութիւնները : Ո՛հ, կատակ է ձեր ըրածը . դուք լաւ գիտէք թէ Ներինա անփորձ աղջիկ մըն է, եւ սակայն այնչափ խելացի է որ քմայքի չի հետեւիր : Տեսէ՞ք, աւաստիկ արեւին վերջին կարմրութիւնը կ'անհետի, ամէն ինչ արդէն զորչ գոյն մը կը ստանայ : Պէտք է որ փութամ տուն հանիր :
(Շարունակելի)

ԾԱՂԿԱԶԱՐԴ

(ԷԷԷԷԷԷԷԷ ԲԱՐԲԱՌՈՎ)

Մենծ-պաք եկաւ, պաղերն անցան,
Պարկենտաքի¹⁾ խաղերն անցան .
Կուտուրիք²⁾ չը մնաց ծիւն³⁾,
Է՛լ⁴⁾ չի լըսի տընոց⁵⁾ ծեն ծիւն⁶⁾ :

Պանին կործին եկաւ արմաղ⁷⁾,
Զուգուխն յօտեց, քափեց արմատ⁸⁾ .
Ցանքը ճիւղեց⁹⁾, պանեց եծուիք¹⁰⁾ .
Արծել տարաւ կառներն, էծուիք¹¹⁾ :

Մենծ պաք եկաւ, պաղերն անցան,
Պարկենտաքի խաղերն անցան .

Կինին ռախիկ կեղարն¹²) իջան . . .
'Խշուաւոր պաք¹³), ռախշախաւան:

Աման տուն՝ ծոմ, ապաշխարանք,
Էլուրն¹⁴), քեօղունք¹⁵, կար՝ կարկըտանք¹⁶).
Հարբած, կըթաած¹⁷) երիկ մարդիկ,
Հօշակեշ եղէք կա'րգաշ¹⁸) Զատիկ:

* * *

Տանը մենծը կապեր պօխմա,
Մըշակներուն տանի խոնճա.
Պըզտիկ բոռը հետը կ'արբայ¹⁹),
Պըաը հարքե²⁰) կըլլմատա²¹):

Թագե հարսը պուլուզն²²) շակին,
Էրկանը քոչ վագդէ եզին . . .
Օ'խ, լիս իջա երկանն հեզին,
Յընծում, պաջիկ՝ մէկը մէկին²³):

Հաւոր եհեն²⁴) պուռք կուման²⁵),
Աղընմածը քեշ կը'րման²⁶).
Սուրալ Զատիկը մօտիկմած է՝,
Չորապ պէտկ է՝ տիր²⁷) մանած է:

* * *

Ծաղկազարդ է՝, ծառեր կենցեց²⁸),
Տաքերն եկան, կըկուկ կենցեց²⁹),
Նիշի-ծառը³⁰) ծաղկեց ճորմակ³¹),
Խընծոր, աեմիւն³²) կապեց կոճակ:

Եօրն օր սորոս Զատիկ եկաւ,
Խըբման իրկունն Քրիստոս յաշեաւ,
Հերկիւք³³) ածեց հաւն'ը կաքա³⁴),
Հաքսն'ը աշղիւն³⁵) կարմիր հագաւ:

Կարմիր հերկիւք, ոսկի սընւ,
Մէկըզմէկու կուտան պարեւ.
Փայուն կօշիկ, փայլուն հալա³⁶),
Էյ ախպըրտիք՝ Քրիստոս Յարեաւ . . .

Ո. Մ.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՆՈՐՀՆԵՐ

Վեհ. Սուլթանը՝ Իր ծանօթ բարեգթու-
թեամբ՝ յառաջիկայ Զատիկան տօնին առ-
թիւ 25,000 զրշ.ի նպատա մը շնորհած է
Ազգ. Պատրիարքարանի, յանուն որք եւ ազ-
քատ ազոց: Կայս. անձնակոն Դանձուն նա-
խարար Վսեմ. Սազըզ Յովհաննէս էֆէնաի,
հեան ունենալով նոյն Դանձուն արկղակալը՝
երեքշարթի օրը Պատրիարքարան դալով,
այդ գումարը անձամբ յանձնեց Ս. Պատրիարք
Հօր որ Կայս. այս շնորհին առթիւ խորին
երախտագիրտութիւն յայտնելով, մաղթանք-
ներ բրաւ Ն. Կ. Վեհափառութեան արեւշա-
տութեանը համար:

Ն. Կ. Վեհափառութիւնը 10,000 զրշ.ի
գումար մըն ալ շնորհած է Հայ Հոռմէակա-
նաց Պատրիարքարանին, Զատիկ տօնին առ-
թիւ, Վսեմ. Սազըզ Յովհաննէս էֆէնաի,
երեքշարթի օրը, Դումգաբուէն Բերա եր-
թալով, յիշեալ գումարը անձամբ յանձնեց
Տ. Պօղոս Էմմանուէլեան Ս. Պատրիարքին
որ խորին երախտագիրտութիւն յայտնեց ու
բարեմաղթութիւններ բրաւ:

* * *

Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ.
Սուլթանը՝ զնահատելով Օրմանեան Ս. Պա-
տրիարքին բարոք ծառայութիւնները՝ բարե-
հաճած է ականակուռ Օտմանիյէ պատուա-
նշան շնորհել Նորին Ամենապատուութեան:
Կայսերական այս պատիւը հազորդուեցաւ եւ
պատուանշանն յանձնուեցաւ Ս. Պատրիար-
քին, երեքշարթի իրիկուն, Սամաթիա, Փո-
խանորդ Սրբազանին առնը գտնուած միջո-
ցին, ուր կը գիշերէր՝ յաջորդ առաւօտուն
քարոզելու համար Ս. Գէորգ եկեղեցին: Զո-
րեքշարթի առաւօտ, Ն. Սրբապետութիւնը իր
քարոզէն վերջ՝ եկեղեցին խոնուած երկսեռ
մողովրդեան հազորդեց Կայսերական սոյն
շնորհը, աւելցնելով թէ եղած պատիւը որ-
քան իր անձին՝ նոյնքան եւ՝ աւելի՛ Ազգին կը
պատկանի: Թագ. Խորհրդարանին միջ ներկա-
ներուն շնորհաւորութիւնները ընդունելէ ետ-

1) Բարեկենդանին. 2) տանիսները. 3) ձիւն. 4) այլեւս.
5) տուններն. 6) ձայն ձուն. 7) ամէն մարդ. 8) տոմա քօ-
քիւ. 9) ջրեց. 10) պարտէզները բահեց. 11) այծերն. 12) կի-
ւար, եէրգէմ. 13) ի շնորհաւոր պաք. 14) աւելու գործո-
ղումիւն. 15) յարդարանք. 16) տիբիշ 17) զծած. 18) կու
գայ կոր. 19) կ'երմայ կոր. 20) պիտի հաւաքէ. 21) կիւլա-
ւատար, հիլիմէտէ (որմատունիէն կտրած փայտերը, որ
վառելու միայն կը ծառայեն). 22) մանկիկը, պզտիկէն.
23) իրարու, մէկին միւսին. 24) ալեւոր հանին. — հանիին
իզականը. 25) բուրդ կը մանէ. 26) կը նմանի կոր. 27) Թիւր,
տիւզիկին. 28) կանանչեաւ. 29) կըկուն կանչեց. 30) նշանին.
31) ճերմակ. 32) դամն, սալոր. 33) հաւկիթ. 34) հաւն ու
կաքաւ. 35) հարս եւ ազգիկ. 36) փեսայութեան լսմ, նոյն-
պէս վերջին ըսուածքն ալ կըճատելով կ'ըսեն, փեսայան
լար:

քը , Ս. Պատրիարքը միջօրէին Պատրիարքա-
րան զարձաւ ուր նոյնպէս ընդունեց բազմա-
թիւ շնորհաւորութիւններ :

Զօրեքշաթթի իրիկուն Ն. Ամենապատ-
ւութիւնը Կայս. Պալատ երթալով , Ա. քա-
տուղար Վսեմ. Թահսին պէյի յանձնեց երկու
ուղերձներ , որոնցմէ մէկուն մէջ երախտա-
գիտութիւն կը յայտնէ Պատրիարքարանին
շնորհաւոր 25,000 զրդին համար եւ միւսովն
ալ իր որտաղին շնորհակալիքը ու մաղթանք-
ները կ'աւելցնէ՝ իրեն շնորհաւոր ակամակուռ
Օսմանիյէ պատուանշանին համար :

Ս. Պատրիարք Հայրը՝ իր հեան ունենա-
լով Ա. գործակատար Տէր Ներսէսեան Տիւղ-
րան էֆէնտին , հինգշաբթի օրը այցելութիւն
տուաւ կրթական նորընտիր նախարար Վսեմ.
Ճէլալ պէյի եւ շնորհաւորեց Ն. Վսեմութեան
բարձր պաշտօնը :

Ճիպրայարի անկիլքան արքեպիսկոպոսը ,
որ մայրաքաղաքս կը գտնուի , երեքշաբթի
Ազգ. Պատրիարքարան զաւով այցելութիւն
տուաւ Ս. Պատրիարք Հօր :

Երուաղեմէն կը հաղորդեն թէ վանքին
դեր-լուսարարապետ Տ. Խորէն Վրդ. Փոր-
թուղական վախճաններ է : Հանգուցեալը
բնիկ Ռատսթօցի էր եւ երուսաղէմի գործօն
միարաններէն . բաւական տարիներ պաշտօ-
նավարած է Կիպրոսի մէջ՝ իրրեւ հոգեւոր
հովիւ :

Բաղէի մեջ բանտարկեալ ինը ազգա-
յիններ — ինչպէս ծանուցին օրաթերթերը —
իրենց պատժին ժամանակը լրացուցած ըլլա-
լով , արձակուելու են բանտէն , այս առթիւ
բարեմաղթութիւններ ընելով Վեհ. Սուլթա-
նին համար :

Արաբկիլի բարեջան առաջնորդը , Տ. Մու-
շեղ Ծ. Վարդապետ , իր քառամեայ պաշտօ-
նավարութեան անգեկազիրը յղած էր Ազգ.
Պատրիարքարան : Այդ անգեկազիրն նախա-
քըննութիւնը՝ Խառն Ժողովին կողմէ յանձ-
նուեցաւ Տ. Վահրամ եպիսկ. Մանկունիի :

Արմաշի փոխ-վանահայր Դուբեան Արա-
ղան այսօր մայրաքաղաքս կը հասնի ուր պի-
տի անցունէ Զատիկ տօնը , եւ Մաքրիդիւղի
Թաղ. Խորհուրդին հրաւերով այդ գիւղի

եկեղեցիին արարողութեանց պիտի նախապ-
հէ ու պիտի քարոզէ Աւագ Շարթուն :

Պատուելի Ասատուբեանի մահուամբ՝ Հա-
Աւետարանական հասարակութիւնը մեծ կը
բուստ մը ունեցաւ : Հանգուցեալը , ընդ
Այնթապցի , 30 տարիէ ի վեր կը պաշտօնա-
վարէր մայրաքաղաքիս մէջ , եւ յարգու-
անձնաւորութիւն մըն էր որչափ իրրեւ հո-
գեւոր պաշտօնեայ՝ նոյնքան նաեւ իրրեւ
բարեւէր ու աղքատասէր մարդ : Յուլարկա-
ւորութիւնը կատարուեցաւ Կիրակի օրը
մարմինը փոխադրուելով իր բնակարանէն
Պոյաճըղիւղէն՝ Ֆէրիդիւղի Էրեղմանատան
մատուոը ուր , ազօթքներէ ու մեռելակա-
նքերէ ետքը , Բրոֆ. Յակոբոս Ճէճըղեան
յուզիչ դամբանական մը խօսեցաւ , հանգու-
եալին կենսադրութիւնը ընելով : Արարող-
ութեան ներկայ էր նաեւ , իբր սղակիր , Տ.
Բարդէն Ծ. Վ. Կիւլէսէրեան , որուն մօրեղ-
բօրօրդին էր Ասատուբեան Պատուելին : Տ.
Բարդէն վարդապետ նախ աշխարհարար Աւե-
տարանը բանալով՝ Տիմոթէոսի Թուղթին մէջ
ղտխը կարդաց , որմէ ետքը հակիրճ դա-
ւանական մըն ալ ինքը խօսեցաւ , յուզուած էր
չեչտելով : Տասը պոսակներ նուիրուած էին
դաճողին , որոնցմէ երկուքը Խաղիւղի Թաղ.
Խորհուրդին եւ Աղքատախնամին կողմէ :
Ի յիշատակ հանգուցելոյն անխտրական մաս-
նակցութեան նպաստամատոյց գործին , Պատ-
ուելի Ասատուբեանի մահուամբ , մեր Բողո-
քական եղբայրները կուսնենան այժմ Պօսթ
մէջ երկու ձեռնադրեալ պատուելի միայն ,
ծերունազարդ Իւթիւճեան Պատուելին , Բիւ-
րակիի արածնառէրը , եւ Պատ. Պետիկեան
որ զրաւականութեան մէջ ծանօթ է «Դիւան»
ծածկանունով :

Թիւրիմացութեան մը հետեւանքով էր որ
նախորդ թիւով ծանուցած էինք թէ Դուբե-
զարուի չորս թաղերու Աղքատախնամին ի
նպաստ կողմակերպուած թատերական ներ-
կայացումը պիտի արու էր նախորդ Կիրակին
Այդ ներկայացումը անգի պիտի ունենայ
ապրիլ 28ի Կիրակի օրը :

Արսօնաճէր Կ. Ս. Իլիթիլիճեմն

Տպագրութիւն Գ. ՄԱՏԵԼԱՍԵԱՆ

Կ. Պոլս , Ֆինճանճըր եօգուշու , թիւ 27

ՃԵՅԼԱՆ

(ՌՈՒԲԷՆ ՄԱՂԱՔԵԱՆ)

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Պոլիս, Սուլթան Համամի հրապարակին վրայ

Փինթո խանին դուրսը, թիւ 2



ՎԵՐՁԻՆ ՓԻՆ
ԹԻՒՐ 2 ՂՐԱՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐԻ

Ջեռֆի, ռոֆի եւ ձեռքի ու ռոֆի
միանգամայն մեքենաներ
կը գոնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործութեամբ, հաստատունը եւ զիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՔԵՐԱ, ՄԵԾ Կառնոյ, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ Գործարարները Գրի.

Կասաբեալ Երաւաստորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՍՈՍՈՒՆԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՏՈՔԹ, Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՄ ՓՈՂՈՑ, ՅԻՒ 200

Կալաթա-Աթաթի Լիսեյն դէմ

ԴՇ. ԵՇ. ՇՐ. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲՇ. ԴՇ. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ (Հետաքրքրաշարժ
Վեպ երեք հատորով) Թարգմ. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ,
Վաճառման կեդրոնատեղին է Պապուտեան Գրատունը,
Կը գտնուի նաեւ ամէն հայ գրավաճառներու քով,

Դին 15 դրուշ

7—10

ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ԱՐԾԱԹԵՂԻՆԱՅ
ՎԱՃԱՌՈՒՄՏՈՒՆ. — Ալիքան Մ. Պարսիզպան
եան Ոսկերչական Վաճառատունը (Պոլիս
Ոսկերչաց Շուկայ, թիւ 13) որ երկար տա-
րիներէ ի վեր կը գործէ ճշգրտեամբ եւ յո-
շոգութեամբ, եւ որուն գործածած ոսկին ու
պղտանդները տաաջին տեսակէ ըլլալէ զատ,
արհեստագիտական պատրաստութիւնն ալ
խիստ ճաշակաւոր է, եւ այս տեսակէ տնկեր-
միշտ զոհ թողուցած է իր բազմաթիւ յաճա-
խորդները, այս անգամ բոլորովին նոր դրու-
թիւն մը հնարած է, — յոյժ գիւրամատչելի
գիներով իր ծախած ապրանքները, ի հար-
կին, 100ին 10 զեղչով եւ առնել յաճախոր-
դէն եւ զրամը վճարել, Կ'արժէ այցելել իր
եւր Վաճառատունը, եւ աչքէ անցընել անոր
ոսկերչական ցուցադրութիւնները, այս կարգի
որ եւ է գնում ընելէ առաջ:

ԻԻՆԻՍՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 ֆր.
1899ին զանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ԶԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն»ի ապահովագրելոյ կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԴՏՆԵԼ ԱՐԵԻՆԷԼԻՔԻ ՄԷՋ ԴՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի զերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի
ապահովագրուողք ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des
bénéfices) ՅՈՒԻ Եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովա-
գրուին:

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի ՏՅՈՐԿԱՆՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը
Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ԱՌՁԵՈՒՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆ — ԱՆԳԼԻԵՐԷՆ

Աթապատիրեց Մ. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

Սոյն Բառարանը կարելոր պէտք մը կը լեցնէ՝ անգլիերէն սորվիլ ուղղով հայ ուսանողներուն համար մասնաւորապէս, եւ անգլիերէն լեզուով զրազող ամէն հայերու համար ընդհանրապէս : Լաթակազմ գեղեցիկ հատոր մըն է, Մատթէոսեան տպարանէն հրատարակուած : Գին 30 դրուշ :

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆ Եւ գրուցարական ընթերցարան : Յօրինեց ԱՆԻՐԱՆԻԿ Լ. ՔԵՍԵՂԷՃԵԱՆ : Գին 2 դրուշ :

Գերմաներէն սորվիլ փափագող հայ աղոց համար պիտանի դասագիրք մըն է այս գրքոյկը :

Հրատարակուեցաւ ՆՈՐ ԴՊՐՈՑ պատկերազարդ դասագիրքին Թ. պրակը : Վաճառման կեդրոնատեղին՝ հրատարակչին Սմբատ Դաւթեանի գրասենեակը, Սիրքէճի, Խօրասան ճեմն խան :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ (1902)

Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

ԲԱՐՁՐԱԴՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՅԻՐ

ՆԱԽԱՏԱՐԵՐԲ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԵՆՈՎՔ ԹԷՅԵԱՆ

Երկասիրողին դիտական դասագիրքերուն ծարրական ու Միջին դասընթացները արդէն լաւ ընդունելութիւն գտած ըլլալով՝ միակ գործածուածներն են Մայրաքաղաքիս ու դաւառաց բոլոր վարժարաններուն մէջ ու արժանացած կրկնակի տպագրութեանց : Այս անգամ Բարձրագոյն Դասընթացքն է որ կուգայ լրացնել այս շարքը :

Սոյն հատորը 500է աւելի էջերով ու 160 պատկերներով գեղազարդուած, տպագրութիւնը մաքուր եւ ընտիր լաթակազմ, յանձնարարելի է մանաւանդ իր ճօն ու թարմ պարունակութեանը համար, այնպէս որ զըպրօցականին եւ գիտասէր ընթերցողներուն միանգամայն հետաքրքրութիւնը կրնայ գոհացնել :

Գին 12½ Դրուշ

“Մասիս”ի համար

Ծանուցումներ կ'ընդունուին

Դիւրամատչելի պայմաններով :

ՀԻՆ ՕՐԵՐ

ԵՒ

ԱՅԴ ՕՐԵՐՈՒՆ ՀԱՅ ՄԵՏԱՏՈՒՆՆԵՐԸ

1550—1870

ԳՐԵՑ Յ. Գ. Մ.

Կը ծախուի բոլոր Հայ գրավաճառներուն քով եւ Բերա Վայսին խանութը :

ՏԱՐԵՐԲ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Աշխատասիրեց՝ Բոգոբուսով ԱԼԻՔՍԱՆ ՊԷՋՃԵԱՆ

Բազմահմուտ հեղինակին սոյն երկը, որ իր տեսակին մէջ լաւագոյն աշխատութիւնն է, ջերմապէս յանձնարարելի է թէ՛ իրրեւ դասագիրք եւ թէ՛ իրրեւ անհատական ուսումնասիրութեան ծառայող օգտակար գործ մը : Բնագիտական հարցերը, գեղեցկապէս պատրաստուած բացատրիչ պատկերներու օգնութեամբ, եւ հեղինակին յստակ ոճին շնորհիւ, զւրաւհասկնալի կը դառնան ամէն դասակարգի ընթերցողներու :

ԳԻՆ 8 ԴՐՈՒՇ

Կեդրոնատեղի՝ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ՎՍԱՃԱ

ՌԱՏՈՒՆ, Ֆիննանճըրաւ Եօգուշ,

Կ. Պոլիս

Սոյն երկասիրութեան հայատառ թըրքերէնն ալ հրատարակուած է, նոյնպէս պատկերազարդ, որուն մնացորդ սակաւթիւ օրինակները կը գտնուին Այնթապ, հեղինակին քով :

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

ԱՐԴՈՒՋԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալարա, Վոլվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին մէն տեսակ շապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպաներու զանազանութեան օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունելու և Էստաբլիսման հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներ օձիք, թեւնոց, ֆլանէլ, գուլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, դրամապնակ, զմեկի «Չէֆիլտ», խողանակ, սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, արհեստագործութեան, յանձնարարութեանց խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէն վատահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուներէն մէկն է :

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵՆԱԼ ԵՆ

Մանօթ պանդոկապետ Պ. ԵՔՐԱՍԻՄՈՒ ՔՈՒՐՈՔԼԻՍԻ Գաւառի վրայ մէջ վարած երկու մեծ օթիկները

MODA PALACE HOTEL (Մօտալ)

ԵՒ

HÔTEL BELLE-VUE (Ֆանարաբլի)

Գարնանամուտի մօտաւորութեան տաթիւ նոր ու լաւագոյն կազմակերպութիւններ ստացած են, յաճախորդները ուրիշ տարիներէ աւելի գոհ ընելու համար ամէն կերպով Այս երկու պանդոկներն ալ բոլորովին բնամանեկան հանգամանք մը ունին, հանդստաւտութեան, մաքրութեան եւ լաւ սպասարկութեան բոլոր պայմանները միացնելով :

ՄՕՏԱ-ԲԱԼԱՍ օթիկը բաց է ամբողջ տարին :

Պէլ-Վիլի օթիկը բաց է Ապրիլէն մինչ Նոյեմբերի վերջը, «Պէլ-Վիլ» օթիկը ունի ընդարձակ պարտէզ, ուր նուագածութիւն ալ կը կատարուի ամէն օր, եւ գարնջատունն իւր անուշահոտութեամբ, ընտանիքները մաքրատարապէս, որոնք կը փափագին գարնան եւ ամառուան եղանակը անցընել այդ ծովահայեաց ու օգտաւն վայրերուն, — Մօտալի կալ

Ֆանարաբլի, — օթիկներուն մէջ, պէտք է փութան հիմակուց զմեկ Պ. ԵՔՐԱՍԻՄՈՒ ՔՈՒՐՈՔԼԻՍԻ :

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ

ԱՌՉԵՌՆ ԲԱՌԱԳԻՐԻՔ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

Այս Բաւարանին երկրորդ սպագորութենէն հաջորաւոր օրինակներու կարճ միջոց մը մէջ վաճառումը ամենէն զօրաւոր ապացոյցն է գործին արժանեաց :

Մանուորապէս Ֆրանսերէն լեզուն ուսանողներուն համար պատրաստուած ըլլալով հանգերձ պիտանի եւ օգտակար է առհասարակ ամէն կարգի անձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ, թուղթի եւ տղտղտութեան մաքրութեամբ կազմի գեղեցկութեամբ հայերէն հրատարակութեանց ամենէն աժանը կրնայ կոչուիլ :

Գին զօրաւոր հաղթօքէ կազմի 25 դր.

Գին ընտիր լաքակազմի 27 դր.

Կեդրոնաւեցիկն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը, Ֆինհանըլար եօգուու, Կ. Պոլիս